

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵԻԱՆԸ

ԵԹ

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵԻԱՆՑԻՔ

ԵՐ. ԸՆՀԱՋԻՋԻ

Պատմական սեպուրիւն *)

Ա.



ազար եօթ հարիւր ութսուն եօթ թուականի Մարտի 9-ին իրար յետեւից հրատարակուամ են Եկատարինէ բ. կայսրուհու մի «ռեսկրիպտը» և մի «Ուկազը»: Առաջինը, որ տրուած է Ռուսաց զօրքի այդ ժամանակուայ ընդհանուր հրամանատար ժենե-րալ-ֆելդմառշալ Պետր Ըլէքսանդրովիչ կոմս Ռումեանցովի անունով, պարունակում է իւր մէջ հետեւեալը. «Ղրիմի վերաբերութեամբ մեզ արած ձեր վերջին զեկուցումից մենք հաւաստիացանք. որ դուք հրամանագրել էք ժեներալ-պորուչիկ իշխան Պրոգորովսկուն համոզելու այնտեղ ապրող Յոյներին և միւս քրիստոնեաներին գաղթել Ռուսաստան: Մենք այդ կէտի վերայ

*) Մեր այս աշխատութեան համար մենք օգտուել ենք հետեւեալ աղբիւրներէց.

1. Զանապարհորդութիւն 'ի Լեհաստան Կ. Մինասայ Բժշկեանց.
2. Մասեաց աղաւնի, 63 և 64 տարի.
3. Միածան, 65 տարի.
4. Присоединение Крыма къ Россіи, Н. Дубровина. Томы второй и третій.
5. Պիրք ժողովածու, ձեռագիր.
6. Универсальное описание Крыма, Кондораки. Части 14, 16 и 17.
7. Պատմութիւն գաղթականութեան խախտու, Կ. Ք. վ. Քուշնարեանց.

առանձնապէս ուշադրութիւն դարձնելով, կարևոր ենք համարում շեշտել այն միջոցներն վերայ, որ նա պէտք է գործ դնէ, որպէս զի կարողանայ համոզել նոցա, որ նոքա չօժարաբամ տեղափոխուեն Նովոռուսիոյ և Ազովի նահանգները, որտեղ նոքա կ'գտնեն մեր հովանաւորութեան տակ անդորր կեանք և կարելին բարօրութիւն: Վասնաւանդ անհրաժեշտ է յորդորել այնտեղի մետրոպոլիտին, խոստանալով նորան զանազան արտօնութիւններ, իսկ խանին պէտք է հասկացնել, թէ այդ բոլորը կատարուում է քրիստոնեաներին թաթարներէ, զուցէ, և տաճիկներէ երեսից, եթէ այդ վերջինները մտնելու լինին Արիմ, նոցա զլիսին զպլիք վտանգից ազատելու համար: Ուստի և չ'զրանաք յանձնարարել ժեներալ Պրոզորովսկուն, որ նա և մեր բոլոր զօրազուխները նոցա դիմող բոլոր քրիստոնեաներին ընդունեն ամենայն սիրով և ձեռքից եկած ամեն միջոցներով օգնեն և ճանապարհ դնեն դէպի վերոյիշեալ նահանգները, և հենց որ մէկը նոցանից դիտաւորութիւն յայտնէ այս կամ այն նահանգը տեղափոխուելու, իսկոյն և եթ առանց յապաղելու յանձնարարեն նորան այդ նահանգների նահանգապետներին: Իսկ ինչ որ վերաբերում է ճանապարհի պաշարին, — տալ նոցա ամեն բան մթերանոց եղած տեղերում այդ մթերանոցներից, չնղած տեղերում — զնելով, նոցա մեր սահմաններում տեղաւորելու և առաջին նուազ հարկաւոր բաները նոցա մատակարարելու համար էլ մենք ուղարկեցինք այդ նահանգների ժեներալ նահանգապետ Պատեօմկինին առանձին հրամանագիր:

Ուկազն էլ, որ տրուած է Պատեօմկինի անունով և որի մասին խօսք է լինում ռեսկրիպտի մէջ, պարունակում է լուր մէջ հետեւեալը. «Մենք ժեներալ-ֆելդմարշալ կոմս Ռումեանցովին սույն թուով տուած մեր ռեսկրիպտով, հրամայեցինք մեր զօրազուխներին Արիմում ապրող Յոյներին, Վրացիներին և Հայերին, որոնք բարեջօժար կամքով կ'համաձայնեն մեր հովանաւորութեան տակ մտնելու և կ'ցանկանան վերաբնակուել Նովոռուսիոյ և Ազովի նահանգներում, ոչ թէ միայն

8. Յայտաւուրք, ձեռագիր.

9. Ձեռագիր Դաւթար Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի.

10. Մեր աշխատասիրած «Նոր-Նախլջանի հիմնարկութեան և կառավարութեան պատմութիւնը», անտիպ.

11. Առածք, ասացուածք և զրոյցք Հայոց Նոր-Նախլջանի, Դ. Տիգրանեանցի.

12. Матеріалы для изученія армянскихъ нарѣчій, К. П. Патканова. Выпускъ I, Говоръ Нахичеванскій.

Բացի այս ազրիս ընդից, մեզ շատ նպաստել են և մեր բարեկամների՝ պ. պ. Սերոբէ 2աթալբաշեանի և Մառուկ Չուքաբեանի և միւսների հաղորդած տեղեկութիւննք, որի համար և յայտնում ենք նոցա այստեղ մեր առ. ի սրտէ շնորհակալութիւնը:

սիրով ընդունել ու ճանապարհ դնել նոցա վերոյիշեալ նաշանգների նաշանգապետների մօտ, կերակրելով նոցա ճանապարհին մթերանոց եղ սձ տեղերում մեր մթերանոցներից, չեղած տեղերում — զնելով, ալլ և քանք անել ձեռքից եկած բոլոր միջոցներով համոզել. որ նոքա համաձայնեն յօժարակամ գաղթել և նամանաւանդ համոզել յոչն մետրապոլիսին: Ձեզ էլ սորանով հրամայում ենք, որ դուք յայնչք ձեզ վերաբերեալ պարտ ու պատշաճ տնօրինութիւնը, որպէս զի այս նոր գաղթականները մեր սահմանները մտնելու օրից ոչ թէ միայն կ'արօտութիւն չունենան պաշարեղէնի, ալլ և, որ, ըստ ձեր բարեհաշիւողութեան, տրուի նոցա ինչպէս հողի բաւականացուցիչ քանակութիւն, նոյնպէս և արբունի օժանդակութիւն տուն և տեղ շինելու համար: Մենք. 'ի հարկէ, չենք զլանալ շնորհել նոցա զանազան արտօնութիւններ, նայելով նոցա թուին և դրութեան, իսկ մինչև այդ — յանձնեցէք նոցա աշխտեղի նաշանգապետների խնամքին, որ նոքա պահպանեն նոցա:»

Ահա այս երկու բարձրագոյն հրովարտակի հիման վրայ Ռումանցովը հրահանգներ տալով, հրամանագրում է Ղրիմի թերակղզում ալլ ժամանակ եղած Ռուսաց զօրրի հրամանատար և լիազօր ժեներալ Պրոգորովսկուն, իսկ նորանից չետոյ նորա տեղը բռնող Սուվորովին և խանի մօտ եղած Ռուսաց «ռեզիդենտ» Կոստանդինովին կատարել կայսրուհու հրամանը: Իսկ Պատեօմկինն անում է պարտ ու պատշաճ տնօրինութիւնը իւր իշխանութեան տակ զտնուած Ազովի և Նովոռուսիոյ նաշանգապետներին՝ Ձերտկովին և Եագլիկովին գաղթականներին ընդունելու մասին, և սկսում է Ղրիմի քրիստոնեաների Ռուսաստան գաղթելու գործն ընդհանրապէս և հայերի գաղթականութիւնը մասնաւորապէս: Ղրիմի խանութիւնն ալլ ժամանակները գտնուում էր մի շատ խղճալի դրութեան մէջ. առևտուրը դադարած, արհեստներն ընկած, երկրագործութիւնն ու անասնապահութիւնն երեսի վերայ թողած, ժողովուրդը պառակտուած, կուսակցութիւնների բաժանուած և բոլոր երկիրը ծայրէ 'ի ծայր ծփում էր խռովութեան մէջ: Չկային ալլ ևս Օրան-Թիմուրի նշանաւոր յաջողները, որոնք այնքան բարձրացրին Ղրիմի նշանակութիւնն իւրեանց ժամանակուայ քաղաքական աշխարհում, չրկային ալլ ևս Թոխտամիշները և միւս նշանաւոր Գիւրէյները, որոնք իւրեանց ահարկու արշաւանքներով երկար ժամանակ սարսափի մէջ էին պահել Ռուսաստանն ու Լեհաստանը: Վերջին ժամանակներն իշխում էին Ղրիմին Գիւրէյների թույլ, զեղիւ և անընդունակ յաջորդները, որոնք խաղալիկ էին դարձել Ցաճկաց սուլթանների ձեռքին, իսկ վերջինս ալլ իսկ ժամանակուայ խան Զահինգիրէյը Ռուսաստանի դրածը և նորա զէնքի

գորութեամբ պաշտպանուածն էր, Երկրի աշգլխի զրութիւնը հետեանք էր այն մրցողութեան, որ քանի ժամանակներից ՚ի վեր սկսել էին գործ դնել Ղրիմի վերաբերութեամբ Ռուսաստանն ու Տաւ-կաստանը, իւրաքանչիւրը դոցանից ձգտելով ինքը տէր դառնալ զեղեցիկ թերակղզուն:

Այն օրից, երբ առաջին անգամ խաները դաշն կապելով Օսմանեան սուլթանների հետ, օգնութեան կանչեցին նոցա Քանովաքուղոց դէմ մղած պատերազմի ժամանակ, նոքա վասսալ և հպատակ դարձան Օսմանցիներին և իւրեանց իշխանութիւնն իւրեանց ձեռքով մատնեցին նոցա ձեռքը: 1475 թուին Օսմանցիք իբրև դաշնակից իւրեանց մարտանաւերով հասնելով Ղրիմի հարաւային ափը, զօրք իջեցնելով նշանաւոր Կալիայի նաւահանգիստը և չաղթելով ու կործանելով Քանովաքուղոց և նոցա դաշնակից հայերի գորութիւնը, ամուր կերպով հաստատուեցին Ղրիմում: Նոքա Ղրիմի նաւահանգիստ քաղաքները բռնեցին իւրեանց զօրքերով, նոքա մի գորավար վաշաչ կարդեցին խանի գործողութիւններին հսկելու և խանի հաստատութեան իրաւունքը սուլթանին սեփականացրին: Սուլթանի բարի կամքից կախումն ունէր այնուհետև Չինգիզի գոռոզ շառաւիղների գահ բարձրանալը և գահից իջնելը, սուլթանի բարեհաճ տնօրինութեան էր կարօտ խանի այս ինչ կամ այն ինչ գործողութեան հաստատութիւնն ու մերժումը: Այլ այնուհետև ամեն բան փոխուում է Ղրիմում—զօրքի կազմակերպութիւնը, երկրի կառավարութեան ձևն ու եղանակը, թաթարների մտաւոր և բարոյական կրթութիւնը, մինչև իսկ նոցա լեզուն ենթարկուում է Օսմանցիների ազդեցութեան: Եւ եթէ այսպէս երկար ժամանակ շարունակուէր գործը, Ղրիմն ամբողջապէս կ'կորցնէր իւր իսկական գոյնն ու հոտը, ժողովուրդը կրթութեամբ, երկիրը կ'ստանար Օսմանեան կայսերութեան երկրներին յատուկ կազմակերպութիւնն ու բնաւորութիւնը և քաղաքականապէս իսկ նորա նահանգներից ու վիլայէթներից մէկը կ'դառնար:

Սակայն կար մի ուրիշ պետութիւն, որին սահմանակից էր Ղրիմը, որ խէթ աչքով էր նայում Օսմանցւոց գործողութիւնների վերայ և որ Օսմանցիներից պակաս ցանկութիւն չունէր Ղրիմին տիրապետելու: Այդ Ռուսաստանն էր, որ Պետրոս Մեծի ժամանակից ամբողջապէս և իւր բնական սահմանների մէջ հաստատուելով, սկսել էր իւր արեւելեան արշաւանքները. որոնց ոյժն ու գորութիւնը հենց առաջին անգամ ստիպուած էին եղել փորձել և նոցա առաջ տեղի տալ արեւելեան երկու մահմեդական մեծ տէրութիւնները՝ Տաւկաստանը և Պարսկաստանը:

1774 թուին կայանում է Քիւչուկ-Կայնարջիկի նպաստաւոր

դաշնադրութիւնը, որի հիման վերայ Ռուսաստանը ձեռք է բերում ոչ միայն Բուգ և Դնեպր գետերի մէջ գտնուած տարածութիւնը, Կիրբուրնն իւր շրջանով, Կերչը, Մնիկալէն և Ազովը, այլ և դաշնագրութեան մէջ կարողանում է մտցնել մի յօդուած, որի զօրութեամբ Ղրիմը մի անկախ քաղաքական մարմին է ճանաչուում: Բարձր-Դուռը թէև պարտուած, թէև նեղն ընկած, այնուամենայնիւ սաստիկ ընդդիմանում է դաշնագրութեան այդ ձևով կազմուելուն, որովհետև շատ լաւ է հասկանում, որ դորանով մի կողմից Տաճկաստանը յետ է մղուում Ղրիմից, միւս կողմից էլ Ռուսաստանն, ընդհակառակը, մօտենում է թաթարներին, միջոց է ստանում ամրանալու Ղրիմում, խառնուելու խանութեան գործերին և կամաց-կամաց հասնելու իւր վերջնական նպատակին: Տաճկաստանի յամառութիւնն այնքան սաստիկ է լինում, որ քանիցս խաղաղութեան դաշն քանդուում է և նորից վերանորոգուում է: Նա չի կամենում հանել իւր զօրքերը Թաման թերակղզուց և ձեռքի տակից անդադար ինտրիգներ է լարում Ռուսների դէմ Ղրիմում ու Ղուբանում, գրգռելով թաթարներին և աշխատելով յարուցանել նոցա մէջ ատելութիւն դէպի Ռուսները: Ահա այս միջոցում Ռուսաստանը վճռական քայլ է անում: Նա որպէս զի չ'թոյլ տալ այնքան դժուարութեամբ ձեռք բերած յաղթութիւնն իւր ձեռքից գնալու, կարճ միջոցում զանազան հնարներով կազմակերպում է Ղրիմում մի զօրեղ կուսակցութիւն և նորա միջոցով ժողովրդի մի մասն իւր կողմը ձգելով, իւր կողմնակից Զահինգիրէյին խանութեան զահն է բարձրացնում: Զահինգիրէյը, որ հին խաների ցեղից էր, տարուում է Ղուբանի կողմերը և Ռուսաց ազդեցութեամբ այն կողմերում թափառող Էդիսանեան, Էդիչլուեան և Ջանբոյուղեան Նոդայ - թաթարների ցեղերի ձեռքով խան է ընտրուում և այնտեղից էլ Ռուսաց զօրքի և Ղրիմի ռուս կուսակցութեան օգնութեամբ առաջնորդուում է դէպի Ղրիմի մայրաքաղաք Բախչիսարայը և ընդհանուր խան է հրատարակուում:

Բարձր-Դուռը սաստիկ զայրանում է և մի կողմից իւր կուսակից թաթարների ձեռքով աշխատում է ապստամբեցնել թաթարներին նորընտիր խանի դէմ. միւս կողմից էլ պաշտօնապէս չի ճանաչում Զահինգիրէյին Ղրիմի տէր, նորա ընտրութիւնն օրինական չի համարում և, վերջապէս, սկսում է նաւատորմիդ կազմել և կամաց-կամաց մօտենալ Ղրիմի ափերին, որ պատեհ րոպէին պաշտպանութիւն կարողանայ ցոյց տալ իւր կուսակիցներին: Տաճիկների թափած ճիգը շուտով պսակուում է յաջողութեամբ: Ծագում է ապստամբութիւն և թաթարները խումբ-խումբ գէնքի են դիմում, իւրեանց նպատակ դնելով գէնքի զօրութեամբ գահավիժել Զահինգիրէյին և

մի ուրիշին իւրեանց յօժարական ընտրութեամբ Բախչիսարայի դահլը բարձրացնելու Տաճկաց գործակալները վխտում են Ղրիմի ամեն մի անկիւնում, խրախուսում են ապստամբներին և խոստանում են իւրեանց օգնութիւնը, մատնացոյց լինելով Օսմանեան նաւատորմի վերայ, որ խարխիս ձգած-կանգնած սպասում էր պատեհ ժամի Ղրիմի սփերից ոչ շատ հեռու:

Բայց Ռուսաստանը, որ սուր աչքերով դիտում էր ամեն բան, շտապում է իւր զօրքով բռնել Ղրիմը և ապստամբութիւնն իւր բռնումը խեղդել: Երկու մեծ բանակ է ուղարկուում Ղրիմ, որոնցից մէկը ժեներայ պորուչիկ Պրոգորովսկու առաջնորդութեամբ բռնում է թերակղզին և ջարդում, ցրում է ապստամբների խմբերը, միւսը ժեներալ-պորուչիկ Սուվորովի զօրավարութեամբ արշաւում է Ղուբանի կողմերն աչնտեղ Նոդայ—Թաթարներին և արիւնոտւշտ լեռնորդիներին հնազանդութեան մէջ պահելու և չ'թողնելու նոցա միանալ թերակղզու ապստամբների հետ: Իսկ որպէս զի Տաճկաց նաւատորմիղը զօրք չիջեցնէ հարաւային ափը, կարգադրութիւն է լինում, որ ծովափնեայ մասում ապրող թաթարները քաշուին հեռանան դէպի լեռները, որ Նոբա ոչ թէ միայն չ'կարողանան միանալ Տաճիկների հետ, այլ և հնարաւորութիւն էլ չունենան չարաբերութիւն ունենալ նոցա հետ: Օսմանցիք տեսնելով Ռուսաց վաթսուն հազարանոց բանակը, տեսնելով թաթարների ապստամբութեան արագ ընկճուելը և իւրեանց կուսակցութեան պարտուիլը, յեն համարձակում թշնամական գործողութիւններ սկսել և դորանով նորից պատերազմ հրատարակելու պատճառ լինել և մնում են լոկ հանդիսատես: Նոքա միայն շատանում են բողոքելով, թէ Ռուսաստանը հակառակ դաշնագրութեան պայմաններին ձեռնամուխ է լինում Ղրիմի խանութեան անկախութեան և այդպիսով դրժում է այն սկզբունքը, որ կազմում էր Քիւչուկ-կայնարջիկի դաշնագրութեան զլիւսւոր հիմունքը և որի զօրութեամբ Ղրիմը ճանաչուած էր անկախ երկիր և ոչ մէկը՝ ոչ Ռուսաստանը և ոչ էլ Տաճկաստանը չ'պէտք է խառնուէին խանութեան գործերին: Սակայն Ռուսաստանը նուրբ դիւանադիտական բանազնացութեամբ կարողանում է ջրել և այդ բողոքի առաքիլութիւնները, ասելով թէ ինքը չի խանգարիլ դաշնագրութիւնը, իսկ եթէ մտել է Ղրիմ ու իւր զօրքով բռնել է երկիրը, — այդ էլ արել է իւր իսկ խանի խնդիրքով ու ցանկութեամբ, որ իբրև իւր երկրի անկախ իշխան ու տէր իրաւունք ունէր խնդրելու ու հրաւիրելու որին որ ցանկանար իրեն օգնելու և ապստամբութիւնը ընկճելու: Եւ վերջ 'ի վերջոյ, յաջողում է վաւերացնել տալ դաշնագրութիւնը, որ Տաճկաստանը այդ բոլոր եղելութիւնը առիթ բռնելով, չէր կամենում վաւերացնել:

րացնել և վերջնականապէս ստորագրել, յաջողում է օրինական խան ճանաչել տալ Քահինգիրէյին, որի խան լինելու իրաւունքն այնքան յամաւութեամբ մերժում էր սուլթանը:

Այժմ Ռուսաստանին մնում էր մի երկրորդ քայլն անել, որ կարողանայ իսպառ տիրանալ Ղրիմին. նորան մնում էր ջանք թափել աղբատացնելու ազնուական դասակարգը և իրան խանին, որպէս զի դորա նիւթական կարօտութիւնից հարկադրուած ստիպուած լինին իրանից նիւթական օժանդակութիւն ու նպաստ ստանալ և երկիրն իւր ձեռքը մատնել: Այդ լինում է մի շատ յաջող քաղաքականութիւն, որ շատ շուտով պսակուում է կատարեալ յաջողութեամբ, անվրէպ հասցնելով Ռուսներին նոցա իւրեանց առաջ դրած վերջնական նպատակին. Ռուսաստանին քաջ յայտնի էր, որ Ղրիմի խանութեան զլխաւոր աշխատաւոր դասակարգը կազմում են թերակղզում շատ ժամանակներից 'ի վեր ապրող քրիստոնեաները, յայտնի է լինում, որ քրիստոնեաներն են հմուտ արհեստաւորները, երկրագործները, պարտիզպանները, այգեպանները, ձկնորսներն ու առւտրականները, որոնք իւրեանց աշխատանքով ծաղկեցնում են երկիրը, կերակրում են մոզաներին և եկամուտ են տալիս խանի գանձարանին, իսկ բուն թաթարները—հասարակ դասակարգը պարապում է միայն անասնապահութեամբ ու խաշնարածութեամբ, ազնուականները պատերազմական և երկրի կառավարութեան գործերով: Այդ պատճառով էլ հենց Եկատարինէ կայսրուհու նշանաւոր համհարգները միտք են չղանում Ղրիմի խանութեան հենց այդ մեծ և կարեւոր աղբիւրը սպառեցնել, խանին և մոզաներին հենց այդ առատ եկամտի հասոյթից զրկել: Որոշուում է քրիստոնեաներին ձեռքից եկած ամեն միջոցներով համոզել, որ նոքա թողնեն իւրեանց բնակութեան տեղերը և տեղափոխուեն Ռուսաստան:

Ահա Ռուսաց այդ քաղաքականութեան հետևանքն է լինում Ղրիմի հայոց գաղթականութիւնը, որի մասին մենք վերը քիչեցինք:

Բ.

Թէ էրբէ էին առաջին անգամ հայերը գաղթել իւրեանց հայրենիքից և բնակութիւն հաստատել Տաւրիկեան թերակղզում,—մեզ այդ լաւ յայտնի չէ, որովհետեւ այդ մասին մեր ձեռքը ոչ օտար և ոչ ազգային աղբիւրներից ոչ մի վաւերական քիշատակարան չի հասել: Հայ և օտար պատմաբաններից ոմանք հիմնուելով Նոր-Նախիջևանի նշանաւոր ձեռագիր Յայսմաւուրքի քիշատակարանի վերայ, կարծում են, թէ առաջին անգամ հայերը գաղթել են Ղրիմ հայաստանից,

Անիի կործանումից յետոյ ժդ. դարում, 1330 թուին, երբ Ղրիմին տիրապետում էին թաթարները և Ջանուպցիք, ոմանք 11 հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ Ղրիմում գտնուում են մի քանի հայկական չիշատակարաններ՝ եկեղեցիների ու վանքերի աւերակներ, մատուռներ ու խաչքարեր, որոնց մնացորդների վերայ պահուած արձանագրութիւնները և նոցա թուականները հասցնում են հայերի թերակղզում բնակուելու ժամանակամիջոցը մինչև ժ. ժա. դարերը, կարծում են, թէ հայկական գաղթականութեան սկիզբը Ղրիմում պէտք է համարել ժ.-երորդ դարը:

Մենք կարծում ենք, որ երկու կարծիքն էլ ճիշտ են, որովհետև առաջին կարծիքի հեղինակները խօսելով հայերի գաղթականութեան մասին, հասկանում են հայերի դէպի Ղրիմ արած խմբովին գաղթականութիւնը, որ, ինչպէս ցոյց է տալիս վերոյիշեալ հաւաստի չիշատակարանը, եղել է հենց 1330 թուին, երկրորդ կարծիքի հեղինակները, ընդհակառակը, խօսում են միայն հայերի Ղրիմում գոյութիւն ունենալու մասին մինչև մեծ գաղթականութիւնը, որ ամենայն հաւանականութեամբ ժ.-երորդ դարից առաջ չի եղել:

Յայտնի է, որ հայոց գաղթականութիւնը գլխաւորապէս սկսուեց Բագրատունեաց տէրութեան վերջանալուց յետոյ, երբ բիւզանդացիք կամենալով հայատտանը դատարկել հայերից, սոխպեցին հայոց իշխաններին թողնել իւրեանց հայրենիքը և իւրեանց ժողովրդով տեղափոխուել Նփրատացուց դաշտավայրը, Կիրիկիան և Փոքր-Հայք: Անկասկած հայ ժողովուրդը մէկ անգամ արդէն ընտելանալով գաղթականութեան, այդ տեղերում էլ հաստատ չ'մնաց, Առևտրական դասակարգը այդ տեղերից էլ տարածուեց Փոքր-Ասիոյ շահաստանները և Միջերկրական, Սև և Ազովի ծովերի ափերը, ուրեմն և Ղրիմի հարաւային ափը, և հետզհետէ բազմացաւ այդտեղ, կազմելով նախկին Յունաց գաղթավայրերում փոքրիկ գաղութներ, շինելով եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, և փորագրելով խաչքարեր և յետագայ սերնդին դոցա չիշատակ թողնելով: Ենթադրում են, որ այդ հին գաղթականներից է մնացել Թէոդոսիոյ Թանգարանի այն յասպիս քարը, որի վերայ քանդակուած փոքրիկ խաչերից մէկն իւր պաղուանդանի վերայ ունի հետեւեալ արձանագրութիւնն ու թուականը. «բարեխաւս է սուրբ նշանքս Դրիգորին և իւր զաւակին նհգ.». Նոցանից մնացած են համարում այն բոլոր խաչքարերը, որոնք կրում են իւրեանց վերաջ. պ. ջ թուականները, և վերջապէս, նոցա ձեռքով են շինուած համարում ս. Խաչի անտառի մէջ գտնուած վանքը, որի հիմունքը և աւերակները մինչև ցայսօր դեռ երևում են: Այդ հին գաղթականութիւնը, որ պէտք է եկած լինի, ինչպէս ասացինք, ոչ մի անգա-

մից, խմբովին, այլ հետզհետէ, բաղկացած է եղել անկասկած զանազան տարրերից, եկած զանազան տեղերից՝ Հայաստանի զանազան նահանգներից, քաղաքներից, գիւղերից և ժամանակի ընթացքում, մեծ գաղթականութիւնից յետոյ, լուծուել ու միացել է Նորա հետ։ Մեծ գաղթականութիւնն իւր թուի առաւելութեամբ, իւր միապագա տարրով, իւր անեցի վարք ու բարքով, կեանքի տարազով և խօսակցութեան բարբառով, ինչպէս երևում է, մեծ դեր է կատարել, տալով Ղրիմի Հայ գաղութին այն բնորոշ չափութիւնն ու գծերն, որով մենք ճանաչում ենք Ղրիմի և Ղրիմից զանազան կողմեր գաղթած, տարածուած հայերին։

Նախիջևանի չիշատակարանի ասելով, Անեցիք սկսել են գաղթել իւրեանց փառաւոր քաղաքից 1062 թուին, երբ Բագրատունեաց ճոխ մայրաքաղաքը պաշարմամբ առնուել է Չարմաղան խանից և աներմունքի ու կոտորածի է ենթարկուել։ Նոքա դուրս գալով ձիրակից, բաժան բաժան են եղել։ Նոցա մի հատուածը գնացել է դէպի Վասպուրականի Վան քաղաքը, միւսը դէպի Կիլիկիոյ Սիսը, երրորդը դէպի Քուղայ և չորրորդը դէպի Վօլգայի ստորին ջրաբաշխը։ Այդ չորրորդ մեծ հատուածն էլ հենց կազմել է Ղրիմի մեծ գաղթականութիւնը։ Գաղթականները հասնելով Վօլգայի ջրաբաշխը, նախ և առաջ բնակութիւն են հաստատել Ղազան և Հաշտարխան քաղաքների միջոցավայրում գտնուած Ախսարայում։ Թաթարաց հաստատած Ոսկեսարայի կամ Ղփչաղների մեծ խանութեան սահմաններում թաթաբաց խանի հրամանով և թույտութեամբ 1299 թուին (չխր.)։ Քառասուն և մէկ տարի մնալով այդտեղ, Նոքա մտածում են տեղափոխուել Ղրիմի թերակղզին, որովհետեւ, նախ, մշտական ջարաբերութիւն ունենալով Ղրիմեցւոց հետ, լսած են լինում այդ երկրի թէ հողի բարեբերութեան, թէ կլիմայի՝ բարեխառնութեան և թէ քաղաքական չաջող հանգամանքների մասին և, երկրորդ, արդէն շատ նեղուած են լինում թաթարների բռնութիւնից և ցանկանում են մի տեսակ ազատուել նոցա ձեռքից ու իշխանութիւնից։ Նոքա դեսպան են ուղարկում «Ջինիւիզաց» իշխանի մօտ, որ բնակուում էր Թէոդոսիոյ «Պառնկ-Նեսարի» մէջ, պայման են կապում նորա հետ՝ երթալու, բնակուելու նորա կալուածներում, և Ախսարայից դուրս գալով բոլորեքեան՝ իշխանները, ազնիւները և հասարակ ժողովուրդը, դիմում են դէպի Ղրիմի հաջաւային ափը, դէպի Թէոդոսիոյ նաւահանգիստը։ Թաթարները ՚ի հարկէ, աշխատում են ամեն տեսակ արգելք լինել և բռնութեամբ կասեցնել այդ գաղթականութիւնը, որ շատ վնասակար էր խանութեան, որովհետեւ հայերը իւրեանց ընդունակութեամբ և աշխատասիրութեամբ մեծ օգուտ էին տալիս թա-

Թարներին, կազմելով միակ երկրագործ, վաճառական և արհեստաւոր դասակարգն անապատական Թաթարների մէջ, բայց չեն յաջողում: Նայերը զէնքի զօրութեամբ ճեղքում են Թաթարաց ստուար զօրութիւնը և պատերազմելով ու յաղթութիւն տանելով, հասնում են Ղրիմ 1330 թուին (չհթ.):

Յայտնի է, որ Մոնղոլ-Թաթարները ժգ. դարի սկզբներում հզօրանալով, զրաւեցին Ասիոյ մեծ մասը. յայտնի է նոյնպէս, որ Նոբա դորանով չ'շատանալով, շարունակեցին իւրեանց արշաւանքը Չինգիզի շառաւիղների առաջնորդութեամբ և մտան Եւրոպա: Բատին ահագին հրոսակի զլուխ անցած, անցաւ Ուրալ և Վօլգա գետերը և տակն ու վերայ անելով այդ տեղերում եղած բոլոր ազգերն ու տէրութիւնները, տիրեց ամբողջ Ռուսաստանին, հիմնեց Ոսկեսարայի կամ Ղփչաղաց խանութիւնը Վօլգայի ստորին ջրաբաշխում և եղաւ Թաթարաց էլ-խաներից մէկը, առերես հնազանդութիւն միայն ցոյց տալով մեծ-խանին և անուանական կապ միայն պահպանելով Ղարաղուրումի մեծ-խանութեան հետ:

Ահա հենց այդ ժամանակները Բատիի օգնականներից չորսը իւրեանց ցեղերով — «Դորդ-Օջաղը» մտան Տաւրիկեան թերակղզին և այդ գեղեցիկ երկիրն էլ դարձրին Ղփչաղաց խանութեան մի մասը: Թաթարաց մեծ խանը Մանգոխանը շնորհում է այդ թերակղզին իւր եղբօրորդի Օրան-Թիմուրին, որ խանի տիտղոս ընդունելով, տիրում է Ղրիմին, Թամանին և Ղուբանի շրջակայքին, իւր հերթով անուանական կապ պահպանելով Ոսկեսարայի հետ, ինչպէս այդ վերջինը Ղարաղուրումի հետ:

1261 թուին Ղրիմի խանութիւնը բաժանուում է երկու մասի՝ Ղրիմի խանութեան Տաւրիկեան թերակղզում և Նոդայի խանութեան Ղուբանի և Դանուբի մէջ գտնուած երկրներում Նոդայի առաջնորդութեամբ, որ ճանաչում էր Ղրիմի խանի իշխանութիւնը: Եւ, վերջապէս, երբ քայքայուում է Ոսկեսարայի խանութիւնը և նորա աւերակների վերայ առաջ են գալիս հետզհետէ Ղազանի և հաշտար-խանի խանութիւններն իւրեանց անկախ խաներով, Ղրիմի խանութեան երկու մասն էլ նորից միանում են, մի անկախ խանութիւն են կազմում, որ գոյութիւն է ունենում ամբողջ հինգ հարիւր տարի, առաջին ժամանակները կառավարուելով Օրան-Թիմուրի յաջորդների ձեռքով, յետոյ Չինգիզի շառաւիղ Կիւէյների հարստութեան ձեռքով:

Օրան Թիմուրը և նորա յաջորդներն իւրեանց Թաթարներով բռնում են Ղրիմի անապատային և դաշտային մասերը մինչև լեռները որովհետև Թաթարներն ինքեանք անապատական ժողովուրդ լինելով, պարապելով խաշնարածութեամբ և վրանաբնակ կեանք

վարելով, ընտելացած էին անապատին և պէտք չունէին Ղրիմի լեռնոտ մասին և հարաւային ամենագեղեցիկ և պողաւտ ափին, իսկ միւս մասը—լեռների լանջերն ու ծովափնեայ մասը տալիս են վաղուց ՚ի վեր այդ տեղերում ապրող քրիստոնեաներին, զլսաւորապէս Յոյներին, որոնք շատ առաջ գեռ եկած էին այդ երկիրը, հիմնած էին բազմաթիւ գաղութներ և պարապում էին առևտրով:

Առաջին Քանովացիները, որոնք բնակութիւն են հաստատում Ղրիմում, լինում են երկու վաճառական՝ Բալդո-Դորիա և Անտոնիո-Դել Օրտո: 1281 թուին զոքա խնդրում ու մեծ փողով գնում են Օրան Թիմուրից հին Թէոդոսիոյ ծովափը և այնտեղ շինում են իւրեանց համար առևտրական մի փոքրիկ ֆակտորիա: Ժգ. և Ժգ. դարերում հնդկաստանի առևտուրը կատարւում էր Սև ու Ազովի ծովերի վերայով, ուստի և բոլոր առևտրական ազգերը ձգտում էին այդ ծովերի ափերին առևտրական ֆակտորիաներ հիմնելու և գաղութներ հաստատելու: Իտալիոյ փոքրիկ հասարակապետութիւնները՝ Վենետիկեցիք, Քանովացիք և Պիզացիք այդ ասպարիկում մեծ եռանդով մրցում էին միմեանց հետ: Վենետիկեցիք հեմնել էին Ըզովը, Քանովացիք էլ, ինչպէս ասացինք, հիմնում են իւրեանց ֆակտորիան հին Թէոդոսիայի տեղում, որ Ժամանակի ընթացքում ստանում է «Կաֆա» անունը:

Խանը թէև պայմանի համաձայն տալիս է Քանովացիներին հին Թէոդոսիայի տեղը, թող է տալիս նոցա այդտեղ ֆակտորիա շինելու, առևտուր անելու և մինչև անգամ առանձին հրամանագրով արգելում է հարաւային ափում ապրող միւս ազգերին առևտրական գործերով պարապելու, այդ մենաշնորհութիւնը տալով միայն Քանովացւոց, բայց դորա հետ միասին մի ծանր պայման էլ է դնում, որ նոքա ներմուծած և արտահանած բոլոր ապրանքներից որոշեալ մաքս հատուցանեն իւր դանձարանին:

Կարճ միջոցում նորահաստատ ֆակտորիան լցուում է բազմաթիւ իտալացի գաղթականներով, որոնք չաջող առևտրական գործողութիւններով սուղ միջոցում հարստանում են, մեծացնում են իւրեանց բնակութեան տեղը և ձեռք են բերում ընդարձակ կալուածներ Կաֆայի շրջակայքում: Սակայն մեծացնելով և ծաղկեցնելով իւրեանց գաղութը, իտալացիք նոյն Ժամանակ համոզւում են, որ իւրեանց քաղաքը չի կարող լիակատար բարգաւաճման հասնել և ինքեանք ևս չեն կարող ապահով լինել մինչև որ չամրացնեն իւրեանց քաղաքը և այդպիսով միջոց չունենան ընկած տեղը պաշտպանուելու թախարներից, որոնք տեսնելով Քանովացւոց օրըստօրէ հարստանալը, սկսել էին արդէն նախանձել և թշնամական չարաբե-

րութիւն ցոյց տալ: Այդ նպատակով նոքա նախապէս քաղաքի չորս կողմը փորում են մի ահագին փոս, որ պէտք է ծառայէր իբրեւ հիմք և առաջին ամրութիւն, որի վերայ ապագայում կամաց-կամաց անկատելի կերպով պիտի աւելանային և ուրիշ ամրութիւններ:

Կասկածոտ խանի աչքից չի խուսափում եւրոպացիների գործողութիւնը: Նա մեկնութիւն է պահանջում, բայց պատասխան է ստանում, թէ այդ փոքրիկ ամրութիւններն ինքեանք շինում են իւրեանց առևտրի մրցակից և հակառակորդ Վենետկեցիներից պաշտպանութիւն համար: Եւ ճշմարիտ, շուտով էլ արդարանում են նոցա ասածները: Վենետկեցիք նախանձելով Կաֆայի յառաջադիմութեան, 1293 թուին յարձակուում են Քանովացւոց վերայ, աւերում քանդում են քաղաքը, այրում են առևտրական նաւերը և ստիպում են նոցա փախչել թաթարների մօտ և նոցանից օգնութիւն խնդրել իւրեանց ազա՛հ կրօնակիցների դէմ: Վենետկեցիք, ՚ի հարկէ, կամենում են մնալ Կաֆայում և բռնել Քանովացւոց տեղը, բայց թաթարները վերայ են հասնում, հալածում նոցա և աւերուած Կաֆան նորից յանձնում նախկին տէրերին: Այդ ժամանակ արդէն Քանովացիք արձակ-համարձակ, առանց դրդելու թաթարների կասկածը, սկսում են ամրացնել իւրեանց քաղաքը: Նոքա ահագին քարեայ պարիսպ են քաշում քաղաքի չորս կողմը նախկին փոսի եզերքով, ամրացնում են նորան 12 աշտարակով, թողնում են եօթն դարպաս և այդպիսով գոյացնում են մի ամուր բերդ, որ յետոյ սկսում է կոչուել «Փռան՝—Նիսար»: Բացի սորանից, Քանովացիք ծովախորշում շինում են մի հսկայական պարիսպ, որի յետևը պէտք է պահուէին և պաշտպանուէին նոցա առևտրական նաւերը, եթէ թշնամիները ծովի կողմից կամենային յարձակուել նոցա վերայ:

Գ.

Կաֆայի և առհասարակ Քանովացւոց բոլոր կալուածների բարգաւաճման և ծաղկելուն նամանաւանդ նպաստում են նոր Ղրիմ եկած հայերը: Նոքա Քանովացւոց իշխանի հետ կապած իւրեանց պայմանի համաձայն նախապէս բնակութիւն են հաստատում Փռանկ-Նիսարում, Կազարաթում, Սուրխաթում և դոցա շրջակայքում, յետոյ բազմանալով, տարածուում են և լցնում են այն բոլոր տարածութիւնը, որ գտնուում էր Ղարապաղարի, Սուրխաթի և Կաֆայի մէջ:

Թէ որքան է լինում հայերի թիւը Ղրիմի թերակղզում մեծ զաղթականութիւնից յետոյ —մենք դժուարանում ենք ճշդիւ որոշել: Յամենայն դէպս կարող ենք ասել, թէ հայերն այդ ժամանակները

մի պատկառելի թիւ են կազմել միւս բոլոր Ղրիմաբնակ ազգերի մէջ, որովհետեւ հենց այդ ժամանակներն է եղել, որ Ղրիմի ծովափնեայ մասը սկսուել է օտարներից հայաստան կամ ծովալիս հայաստան կոչուել: Յիշատակարանի ասելով, զաղթական հայերը շինում են Ղրիմում հարիւր հազար տուն և շատ դօրանում ու բազմանում են: Եթէ միայն Յիշատակարանի հեղինակը «հարիւր հազար» թիւը չի գործածում իբրեւ անորոշ մեծութիւն ցոյց տուող մի թիւ և տուն ասելով հասկանում է այնպէս, ինչպէս այժմ մենք ենք հասկանում, կարելի է ուրեմն ամենայն ճշտութեամբ այդ ժամանակուայ Ղրիմաբնակ հայերի թիւը հաշուել 5 հարիւր հազար հոգուց ոչ պակաս: 2¹ պէտք է մոռանալ այն հանգամանքը, որ հինգ հոգի թիւը, որ առհասարակ մի միջին թիւ է համարուում ամեն մի տան համար, շատ էլ չի չարմարուում հայերի տան կամ ընտանիքին, որովհետեւ, ինչպէս յայտնի է, հայոց տները չեն սիրում բաժանուել և այդ պատճառով էլ շատ բազմամարդ են լինում:

Հայերը մի կողմից իւրեանց յատուկ աշխատասիրութեամբ, աչքաբացութեամբ և ընդունակութեամբ, միւս կողմից էլ երկրի բարեբերութեան և առևտրական գործերի յարմարութեան շնորհիւ շատ շուտով մոռանում են իւրեանց հայրենիքից զաղթելու և թաթարների մէջ ապրելու ժամանակամիջոցում քաջածնեղութիւնները, նոքա կարճ միջոցում բարւոքում են իւրեանց կեանքը, հարստանում են, ծաղկում են, կամ, ինչպէս ասում է Յիշատակարանը, դօրանում են: Նամանականդ շատ առաջ է գնում առևտրական դասակարգը, յաջող հանգամանքներից օգտուելով և նաւահանգստների ու առևտրական շուկաների գործերի մեծամասնութիւնն իւր ձեռքը ձգելով: Հայ վաճառականները յաջողութեամբ մրցում են իտալացիների հետ և իւրեանց ճարպիկութեամբ և հմտութեամբ պատուաւոր տեղ են գրաւում թէ Զանովացի իշխանաւորների առաջ և թէ ընդհանրապէս բոլոր ազգաբնակչութեան մէջ: Նոքա վաճառում են իտալական և գերմանական գոյնգոյն մահուդներ, անկուածներ, ապակի, գինի, մարգարիտ, կարմիր կաշի և ձեռք են բերում թաթարներից մեծ քանակութեամբ գոհարեղէն և ոսկի, որ նոքա կողոպտել ու չափշտակել էին հնդկաստանում, Չինաստանում և Պարսկաստանում:

Նիւթական բարգաւաճման հետ զուգընթացաբար առաջ է գնում և հայերի մտաւոր զարգացումը: Նոքա շինում են բազմաթիւ եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ, որոնցից որը կանգուն, որը կիսակործան, որն էլ իսպառ աւերուած մինչև ցայսօր դեռ երևում են հետաքրքիր ճանապարհորդի աչքին, եթէ նա անցնում է Թէոդոսիայի արևելեան կողմից լեռների վերայով մինչև Էսկի-Ղրիմ և Ղա-

ասում, Յիշատակարանն ասում է, թէ գաղթականների կառուցած եկեղեցիների թիւը եղել է հազար. թէ ինչու անսպասճառ հազար — մենք չ'գիտենք. կարելի է Յիշատակարանի հեղինակը կամեցել է Անեցի գաղթականների շինարարութիւնը նմանեցնել Անի քաղաքին, որ ինչպէս ասում է աւանդութիւնը, ունեցել է հազար ու մի եկեղեցի: Բայց մենք կարծում ենք, թէ ճշմարիտ որ Ղրիմի հայերը խիստ շատ եկեղեցի են շինել. միայն Կաֆան ունեցել է 45 եկեղեցի, ինչպէս ցոյց են տալիս եկեղեցիների այժմուայ բազմաթիւ աւերակները և տեղերը և ինչպէս սլատմում է յայտնի «Քէֆէ քաղաք ծովահայեաց» երգը, որի մէջ չիշուում են 24 եկեղեցու անուն, որոնք դեռ շէն ու զարդարուած են եղել մինչև անցեալ դարի վերջերը: Այս բոլոր եկեղեցիները, վանքերը և մատուռները զարդարուած են եղել թանկագին ոսկէ և արծաթէ սպասներով, մետաքսեայ, բեհեզեայ, եկեղեցական զգեստներով, վարագոյրներով ու փռուածքով, ականակուռ խաչերով, սաղաւարդներով ու վականներով: Տաճարների պատերի մէջ զրսից ու ներսից հագցրած են եղել բազմաթիւ որձաքար և մարմարիոնեայ խաչքարեր նուրբ քանդակներով ու արձանազրու թեմբ, որոնց շինելու, քանդակելու ու փորագրելու դժուար արհեստը գաղթականները բերած են եղել հայրենիքից: Եկեղեցիներից նամանաւանդ նշանաւոր է եղել Թէոդոսիոյ Ս. Սարգիսը, որ եղել է «աթոռակալ» կամ մայրեկեղեցի, իսկ վանքերից՝ Ս. Նշանը կամ Ս. Խաչը, որտեղ նստել են զրիմաբնակ հայերի առաջնորդները և ամբողջ հինգ հարիւր տարի կառավարել են հայոց այդ հեռաւոր թեմը: Բոլոր հին շինութիւնները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները և աղբիւրների աւազանները շինուած են եղել հայկական ոճով ու ճաշակով և զարդարուած են եղել քանդակագործ փայտեայ ամուր դռներով, որոնցից շատերը գաղթականները շատ ուրիշ եկեղեցական զարդերի ու սպասների հետ միասին բերած են եղել հայաստանից:

Ղրիմաբնակ հայերն ունեցել են բազմաթիւ հոգևորական դաս կուսակրօն և ամուսնացեալ, որոնք դատարկաձեռն չեն անցկացրել իւրեանց օրերը: Նոքա ամուր կապ են պահպանել Մայր-Աթոռի հետ, հոգացել են գաղթականների մտաւոր և բարոյական կրթութեան վերայ, իւրեանց խցերը դպրոց դարձնելով ժողովրդի մատաղ սերնդի կրթութեան համար, իսկ գիտնական աբեղաները «հողէ սփեր» են շինել և իւրեանց կեանքն անց են կացրել, մագաղաթ պատրաստելով և թանկագին ձեռագրեր արտագրելով «ընդ հովանեաւ» բազմաթիւ վանքերի ու եկեղեցիների, որոնք շինուած են եղել սիրելի հայրենիքի եկեղեցիների ու վանքերի անուններով:

Առաջին անգամ Ղրիմի լուսաւորչեան հօտը պառակտուել է

1438 թուին, հռովմի պապերն օգտուելով այն հանգամանքից, որ Ղրիմի մի մասին իշխում են կաթոլիկ ճանովացիք, հաստատում են 1320 թուին եպիսկոպոսական աթոռ Կաֆայում և ապա սկսում են ուղարկել ճիզուլիթեան կարգի արեղաներ քարոզչութեան, ձեզուլիթները նախապէս իւրեանց նպատակ են դնում քրիստոնեայ դարձնել թաթարներին, բայց երբ այդ նոցա չի չաջողում, նոքա իւրեանց քարոզչական գործունէութիւնը փոխադրում են հայաբնակ տեղերը, օգտուելով իւրեանց աթոռակալ եպիսկոպոսի իշխանութիւնից և վաշելելով ճանովացւոց իշխանի հովանաւորութիւնը: Սակայն հեշտ չէր և հայերին կաթոլիկ դարձնելը. նոցա հողեւորականութիւնն արթուն էր, ինքը ժողովուրդն էլ սիրով և ամուր կապերով կապուած էր իւր հարազատ եկեղեցու հետ: Հարկաւորում է մի երկար և յամառ մաքառումն, որի մէջ մեծ դեր է կատարում մարմնաւոր իշխանութեան ճնշումն, մինչև որ կաթոլիկները կարողանում են հասնել իւրեանց նպատակին: Ժամանակի կոնսուլ Պուայօ Իմպերիալէն սկսում է զօրեղ կերպով իւր ազդեցութիւնը բանեցնել վիճակաւորի և հայ հարուստ դասակարգի ու ազնուականութեան վերայ, սպառնալով, որ եթէ հայերը չամառեն, կ'զրկուին իւրեանց ունեցած արտօնութիւններից, իրաւունքներից: Նեղն ընկնելով ու ուրիշ ճար չ'գտնելով ազատուելու ճանովացւոց բռնութիւնից, նոքա առաջին նուազ համաձայնում են միայն ընդունել պապի գլխաւորութիւնը, կարծելով, թէ այդ կաթոլիկութիւն ընդունել չի նշանակում: Ճիզուլիթները շատ զգուշութեամբ են վարուում. նոքա, նախ, մուտ են գործում հայոց եկեղեցիները, յետոյ հետզհետէ սկսում են փոփոխել լուսաւորչական եկեղեցու ծէսերը և, վերջապէս, բանն այն տեղն են հասցնում, որ սկսում են լատիներէն աւետարան կարդալ և առհասարակ լատիներէն ժամասացութիւն էլ կատարել: Միով բանիւ գործն այնպիսի խոհեմութեամբ ու շտակտով է առաջ տարուում, որ հայ ժողովուրդը կամաց-կամաց ընտելանում է կաթոլիկութեան, այնպէս որ հայերը մէկ էլ այք են բաց անում և տեսնում են, որ արդէն կաթոլիկ են: Ազգային եկեղեցուն հաւատարիմ է մնում միայն գաղթականների հասարակ դասը—ամբոխը:

Առհասարակ ճանովացիք սիրով են վերաբերուում գէպի հայերը, նոցա ըստ ամենայնի հաւասար իրաւունքներ շնորհելով խտայացիների հետ: Նոքա նամանաւանդ սիրով են վերաբերուում գէպի հայ ազնուական ու հարուստ դասակարգը, որոնցից առաջինն տալիս են մեծամեծ պատիւներ, պաշտօններ ու իշխանական իրաւունքներ, իսկ երկրորդին լիաձեռն ազատութիւն առևտրական ասպարիզում և ամեն տեսակ արտօնութիւններ: Եւ այդ բոլորն 'ի զուր չէր, որովհետև հայերն

իսկապէս օգտաւէտ տարր էին հանդիսանում Քանովացւոց կալուածներում նիւթականապէս և բարոյապէս: Հայ երկրագործը բարձրացնում էր երկրի արդիւնաբերութիւնը, արհեստաւորը ծաղկեցնում էր արհեստները, վաճառականը, բացի երկրի առևտուրը զարգացնելուց, յանձն էր առնում ամեն տեսակ զոհողութիւն բերդեր շինելու և քաղաքներն ամրացնելու գործում և, վերջապէս, հայ իշխանը բաղմաթիւ մարդկանց գլուխ անցած՝ իւր զէնքի զօրութեամբ պաշտպանում էր Քանովացւոց կալուածները թշնամիների յարձակմունքից: Հայերն են շինում «հացոց-բերդ» կոչուած Կաֆայի նշանաւոր ամրութիւնը, հայերն են իւրեանց զէնքի զօրութեամբ երկար ժամանակ թեւ ու թիկունք լինում Քանովացւոց՝ նոցա թաթարների դէմ մղած երկարատեւ ու բազմաթիւ կռիւներում, վերջապէս, հայերն են լինում, որ իւրեանց իշխանների առաջնորդութեամբ կարողանում են երկար ժամանակ պաշտպանել Կաֆան Օսմանցիների յարձակմունքի ժամանակ:

1344 թուին թաթարները յարձակուում են Սուդակի վերայ և սկսում են սպառնալ Կաֆային և Քանովացւոց միւս կալուածներին: Ահա այդ ժամանակ հացոց մեծամեծները հաւաքուում են կոնսուլի մօտ և խորհրդակցում են նորա հետ Կաֆայի հին բերդի — «Փռանկ-ձիսարի» մօտ մի նոր բերդ շինելու և այդպիսով աւելի ևս ամրացնելու քաղաքը: Նուքա մտածում են այդ բերդով պաշտպանել հացոց թաղը, որ բոլորովին անպաշտպան էր, որովհետեւ հայերը մեծ գաղթականութեան ժամանակ «Փռանկ-ձիսարում» բնակութեան տեղ չը գտնելով, բնակուել էին հին բերդից դուրս քաղաքի արևելեան կողմը: Քանովացի կոնսուլը լաւ հասկանալով հայերի դիտաւորութեան օգտակարութիւնը, ոչ միայն թոյլ է տալիս, այլ և խրախուսում է նոցա և յորդորում փութով ձեռնարկելու գործին, եռանդով առաջ տանելու և շուտով ի կատար ածելու: Վճռում են Փռանկ-ձիսարի պարիսպների պէս մի նոր աւելի հաստակառոյց ու աւելի մեծ տարածութիւն բռնող, աշտարակազարդ և մեծամեծ դարպասներով պարիսպ քաշել, շրջապատել ամբողջ հացոց թաղը և մէջ առնել Փռանկ-ձիսարը, սկսելով ծովածոցի հարաւային կողմից և անցնելով լեռների վերայից դէպի ծովածոցի հիւսիսային կողմը, որտեղ գտնուում էր Փռանկ-ձիսարի «Իսկիլէ-Ղափու» կոչուած դուռը: Որոշուում է, որ մեծատուն հայերից իւրաքանչիւրը, որ պէտք է մասնակցէր շինութեան գործին, յանձն առնէր պարսպի միայն մի մասը շինելու և դորան համեմատ որոշեալ քանակութեամբ քար ու ատաղձ բերել տար ու կուտէր նշանակուած տեղը, իրաւունք ստանալով իւր անուամբ կոչելու իւր շինած պարսպի մասը և իւր փշատակարանը զը-

րելու նորա վերայ: Ասում են, թէ սորանից է առաջ եկել Ղրիմեցի զաղթականների մէջ նոցա միմեանց հարստութիւնը չափելու յայտնի տարօրինակ սովորութիւնը: Կաֆացիք, երբ որ կամենում էին ասել, թէ այս ինչ մարդը այսքան հարստութեան տէր է, սովորութիւն էին արել ասելու, թէ այս ինչ մարդը կարող է քաղաքի ամրութիւնների համար այսքան քար տալ:

Մեծ եռանդով հայերը ձեռնարկում են գործին և կարճ միջոցում պատրաստուում է ահագին պարիսպը, որ ամեն մի 20, 40 և 60 սաժէն տարածութեան վերայ ունենում է մի մի աշտարակ որմնածերպերով և ինը դարպաս իւր բոլոր երկարութեան վերայ:

Ոմանք ասում են, թէ հայոց բերդի շինութեան պատճառը եղել է ոչ թէ թաթարների Սոդզայի կամ Սուդակի վերայ յարձակուելը, այլ մի ուրիշ դէպք: Պատմում են, որ մի անգամ Քանովացի առևտրականներից մէկը վիճաբանութեան է բռնուում մի թաթար վաճառականի հետ, որ մի հարուած է տալիս խալալացու երեսին, Ծագում է կռիւ և Քանովացին սպանում է թաթարին: Քանիքէկ խանը ուխտում է վրէժխնդիր լինել եւրոպացի վաճառականից. նա մարդ է ուղարկում և պահանջում, որ մարդասպանին իւր ձեռքը տան, բայց մերժումն ստանալով, գալիս, պաշարում է քաղաքը: Ահա այդ ժամանակ, ասում են, հայերը, որոնք պաշարումից դեռ շատ առաջ տեղեկացած են լինում խանի դիտաւորութեան մասին, հաւաքուում են կոնստլի մօտ և թոյլատուութիւն են խնդրում ամրացնելու քաղաքն իւրեանց ծախսով ամենավտանգաւոր կողմից, այն է ճովափից դէպի այն կողմը, որտեղ այժմ գտնուում է գերեզմանոցը:

Պաշարումը տևում է երկու տարի, բայց խանը և ոչ մի վնաս չի կարողանում տալ քաղաքին, որովհետև պարիսպները շատ ամուր էին և լաւ պաշտպանուած: Ահիշտ է, խանը մտածում է մեքենաներով քանդել պարիսպները, բայց քաղաքացիք յանկարծակի դուրս են խուժում քաղաքից և այնպիսի ջարդ են տալիս նորան, որ նա ըստիպուած է լինում թողնել պաշարումը և հեռանալ քաղաքից: Նա իւր գալուցից թափում է Բալրիսլուի վերայ, որ առնում և այլում է: Քանովացիք ընկնում են նորա չետեից, աւերում են Ազովի ծովի ափերը և այնպիսի սարսափ են ձգում խանի վերայ, որ նա հարկադրուում է խաղաղութեան դաշն կապելու:

Ղրիմի հայ ազնուական դասի մէջ նշանաւոր են լինում չորս իշխանական տուն կամ տոհմ՝ Պահլաւունիք, Մուղալենք, Դարեջանենք և Աղամալենք, որոնց վերայ չետագայ ժամանակներում աւելանում է և Բագրատունի տոհմը: Սոքա մեծ յարգանք են վայելում ժողովրդից և մեծամեծ պատիւների ու պաշտօնների են արժանա-

նում «Քինիլիզաց» իշխաններից, Պարսպաշինութեան ժամանակ Պահլավունի Տէր-Մաղաքիա աւագ երէցն իւր պապի եղբօր թուան Պետրոսի հետ շինում են սլարսպի մի մասը «ԵՃ. կարտի» տարածութեամբ և գրում են իւրեանց չիշատակարանը նորա վերայ. Մուղալենց Մարգար իշխանը Քանովացւոց Ըիրին իշխանի հրամանով նշանակուում է Քինիլիզաց կալուածների պահապան և իւր զօրագնդով նստում է Կազարաթում, ուստի և թաթարները սովորութիւն են անում նորա տոհմի անունով Կազարաթի համանուն գետը կոչել «Մուղալչէօզէն». Դարիջանենց աւագ-պարոն Մուրատի Յովսէփ որդին համարուում է Կաֆայի առաջին նախարարը. Աղամալենց Մեսրոպ իշխանը նշանակուում է Կաֆայի չորրորդ գնդապետ, և այլն:

Այսպիսի բարւոք վիճակի մէջ ապրում է Ղրիմի հայ գաղթականութիւնը մինչև 1475 թուականը, երբ գալիս, տիրապետում են Կաֆային Օսմանցի Տաճիկները և կոտորում, հալածանքի են ենթարկում հայերին ու նոցա զանազան կողմեր ցրուելու պատճառ լինում:

Օսմանցւոց արշաւանքի պատճառները զանազան աղբիւրներ զանազան տեսակ են պատմում: Ոմանք, ինչպէս Նախիջևանի Յիշատակարանը, պատմում են, որ 1344 թուականի պատերազմներից յետոյ Ղրիմի խաներն ընդհանրապէս խաղաղութեամբ են կառավարում Քանովացւոց հետ և սիրով պահպանում իւրեանց դրած դաշինքը և ուխտը մինչև 1468 թուականը, երբ նորից անհամաձայնութիւն է ծագում երկու ազգի մէջ, որ և Կաֆայի աւերմունքի պատճառ է լինում: Այդ թուին, ասում է Յիշատակարանը, խանը կնութեան է առնում իւր որդուն Քանովացւոց Ըիրին իշխանի դուստրը, Խնամութիւն կապելուց յետոյ, Ըիրինը հրաւիրում է իւր մօտ փեսային, որից օգուտ քաղելով թշնամիները, սկսում են զրդուել խանին Քանովացւոց դէմ, ասելով, թէ Ըիրինը հրաւիրեց քո որդուն իւր մօտ խորհրդակցելու, որ նորան նստեցնէ քո տեղ խան, և Ըիրինին խանի դէմ, ասելով, թէ փեսադ եկել է քո մօտ, որ քեզ հալածէ ու սպանէ: Թշնամիները հասնում են իւրեանց նպատակին: Ըիրինը հաւատ ընծայելով բանտարկուների խօսքերին և կասկածելով փեսայի սիրոյ և հաւատարմութեան վերայ, անակնկալ կեպով բռնում է նորան և բանտարկում, տալով նորան «ի պահեստ լատին իշխանին»: Խանը, որովհետև յոյս չի ունենում իւր ոյժերով չաղթելու Քանովացւոց և իւր որդուն ազատելու, դեսպան է ուղարկում Օսմանցւոց սուլթանի մօտ և խնդրում նորա աջակցութիւնը, ասելով, թէ թող Կաֆա քաղաքը ձերը լինի, միայն որ իմ որդուն բանտից ազատէք ու ինձ յանձնէք: Սուլթանը համաձայնում է և թաթարները ցամաքից, իսկ թուրքերը ծովից պաշարում են քաղաքը: Երկար ժամանակ պաշա-

րում են քաղաքը, բայց չեն կարողանում առնել, որովհետև Ֆռանկ-
չիսարը և Հայոց բերդը ամուր էին և Հայոց իշխաններն միացած
Քանովացւոց հետ ողի ՚ի բռին ընդդիմանում ու պաշտպանում էին
նորան: Սակայն շուտով պաշարը վերջանում է, Քանովացւոց զօրքը
թուլանում, ինքը իշխանն էլ յոյսը կտրելով, թողնում, փախչում է:
Հայերը, մինակը, անօդնական ու անճար մնալով, ստիպուած են լի-
նում ընդունել թուրքերի առաջարկութիւնը, բանալ քաղաքի դռ-
ները և անձնատուր լինել, ազատ ու անպնաս մնալու պաշմանով:

Ոմանք էլ, ինչպէս Ղրիմի պատմագիր Կոնդորակին, նաև պատ-
մութիւնն ուրիշ տեսակ են պատմում: Նոքա ասում են, թէ Քանո-
վացիք ստիպում են Մինգլիզիբեյ խանին պաշտօնանկ անել իւրեանց
սահմանակից դաւառի իշխան Էմինեկ-բէկին և նորա տեղը նստեցնել
են տալիս թաթարներից ատուած մէկին: Էմինեկ բէկն ապստամբում
է խանից, մեծ կռուակցութիւն է կազմում և դեսպաններ ուղարկելով
Օսմանցւոց Մէհմէմէտ բ. սուլթանի մօտ, որ այդ ժամանակներն ար-
դէն առել էր Պօլսը, խնդրում է նորա ձեռնտուութիւնը Քանո-
վացւոց դէմ, խոստանալով մտնել նորա գերիշխանութեան տակ:
Նշանաւոր սուլթանը, որ այդ ժամանակները պատրաստուած է լի-
նում արշաւելու Խալիս, Ալքանիս, Կանդիա և Հոդոս և այդ նպա-
տակի համար մի մեծ նաւատորմիդ է կազմած լինում, ըմբռնում է
Էմինեկ-բէկի առաջարկութեան օգտաւետութիւնը Օսմանեան կայս-
րութեան համար և պատրաստի նաւատորմիդն ուղարկում է Սև ծովը
դէպի Կաֆա: Նաւատորմիդ պետ Ահմադ Կեզլի Կապուտան փաշան
հասնելով Կաֆայի նաւահանգիստը, հրամայում է նախապէս թնդա-
նօթներն ուղղել դէպի քաղաքի պարիսպները և ռմբակոծել, յետոյ
նա զօրք է իջեցնում ցամաք և չորս տեղ մարտկոց շինելով, շարու-
նակում է ռմբակոծութիւնը ցամաքից և ծովից, ճիգ թափելով քան-
դել պարիսպները: Երբ որ այսպէս հինգ օր շարունակ տեսնում է ռմ-
բակոծութիւնը և ամուր պարիսպները չ'իմանալով, փլչելու նշան-
ներ են ցոյց տալիս, Քանովացւոց վերջին կոնսուլ Անտօնիօ-գելլա-
Դաբելլան և նորա խորհրդական Ուրբերտօ-Սկուարիսֆիօն դուրս են
գալիս քաղաքից և յանձնում են փաշային քաղաքի բանալիները,
նախապէս խօսք առնելով չ'վնասել քաղաքացւոց և ձեռք չ'տալ
նոցա ստացուածքին: Ասում են, թէ դոքա կաշառուած են լինում
և հէնց իւրեանց այդ գործողութեան համար ստանում են իւրեանց
արժանաւոր պատիժը: Անտօնիօն դատապարտուում է տաժանակիւր
աշխատանքի, իսկ խորհրդականը տարուում է Կոստանդնուպօլիս և
նահատակուում է կապանքների մէջ: Ասողներ էլ կան, թէ դաւա-
ճանողներն եղել են ոչ թէ կոնսուլն ու նորա խորհրդականը, այլ

ութ աւանաւոր մարդ հաչ մեծամեծներէց, որոնք ժողովրդին գրգռել են իշխանաւորների դէմ և ստիպել են նոցա քաղաքը յանձնել թուրքերին, որի համար դոքա էլ կրել են իւրեանց արժանաւոր պատիժը: Փաշան հրամայել է նոցա զլխատել:

Եւ զարմանալին այն է, որ այդ անհաւասար պատերազմում, բացի հաչերից, ոչ ոք չի օգնել Քանուկացւոց, չ'նայելով, որ նոքա պատերազմից դեռ շատ առաջ զգալով, որ թուրքերը պիտի միանան խանի հետ և արշաւեն իւրեանց վերայ, օգնութիւն էին խնդրել իւրեանց Դոժից և նորա միջոցով դիմել էին Անգլիացւոց և հունգարացւոց թագաւորներին:

Կոնդորակին թուրքաց աղբիւրներից առնելով, ասում է, թէ այդ ժամանակները Կաֆան ունեցել է վեց հազար քրիստոնեայ ընտանիք, որոնք իւրեանց հերթով ունեցել են 30 հազար ստրուկ:

Դ.

1475 թուի պատերազմից յետոյ Ղրիմի խանութիւնը վասալական երկիր է դառնում Օսմանեան կայսրութեան: Մինգլիգիրէյը, ինչպէս որ պայմանաւորուած է լինում պատերազմից առաջ, մտնում է սուլթանի գերիշխանութեան ներքոյ հետևեալ պայմաններով՝ ա. խանը լիակատար իշխանութիւն ունի իւր խանութեան մէջ. նա ընտրուում է Գիրէյներից, բայց հաստատուում է սուլթանից. բ. Սուլթանը Ղրիմի ծաւրագոյն թագաւորն է. նա միայն իրաւունք ունի թաթարներին պատերազմ տանելու, պատերազմ հրատարակելու և խաղաղութեան դաշն կապելու. գ. Սուլթանն իբրև խալիֆա համարուում է խնամակալ մահմեդական կրօնքի, ս. գերեզմանների և ուխտատեղիների, դ. Սուլթանը պահապան զօրք է պահում Գիօզլեվում: Սակայն այդ դեռ սկզբնական պայմաններն են լինում: Յետագայ ժամանակներում սուլթանի իշխանութիւնը գնալով զօրանում է և խանը կամաց-կամաց բոլորովին ընկնում է նորա իշխանութեան ներքոյ: Մինգլիգիրէյի Մահոմեդ որդուց յետոյ խաները սկսում են նշանակուել ուղղակի սուլթանից և համարուել նոցա տեղակալները Ղրիմում. նոքա մինչև անգամ ռոճիկ էլ են ստանում սուլթանից և նորա ցանկութեան համեմատ զահավիժուում ու գահ են բարձրանում:

Կապուտան-փաշան բռնելով Կաֆան, հրամայում է քաղաքացիներին նախ, ցուցակագրել իւրեանց ստացուածքը, որովհետև, ինչպէս ասացինք, պայմանաւորուած էր ձեռք չ'տալ նոցա ունեցած չունեցածին: Բայց յետոյ տեսնելով, որ ցուցակների մէջ մտել են և ըստրուկները, նա հրամայում է խլել ստրուկներին նոցա ձեռքից և ստի-

սղում է քաղաքացիներին նորից նոցա չետ դնել, մեծ փրկանք վճարելով, Յետոյ օտարահպատակ վաճառականներից նա առնում է 25 հազար դուկատ տուգանք, իսկ Քանովացիներից սահանջում և ստանում է մի աշնպիսի գումար, որ հաւասար էր նոցա ստացուածքի արժէքի կիսին, Վերջապէս, նա հրամայում է բոլոր Քանովացիներին պատրաստուել դուրս գալու և զնալու Ստամբուլ, քաղաքի ամենաընտիր և ականաւոր երիտասարդներին ենիչար է ընտրում-առնում, սպանել է տալիս 300 քաղաքացի ամենահարուստներից և 162 վալահացի վաճառական, առաջիններին՝ որովհետև կամենում էր տիրանալ նոցա հարստութեան, երկրորդներին՝ իբրև վրէժխնդրութիւն, որովհետև Մոլդաւացւոց Պալադինը նախընթաց տարին սպանել էր տուել թուրք գերիներին:

Բայց ամենամեծ հարուածը նա տալիս է հայերին: Նա չ'շատանալով նորանով, որ կողոպտում է քաղաքի հարուստ հայերին, որ շատերին սպանել է տալիս և ընտիր երիտասարդներին ենիչար է առնում, սպանում է և բոլոր հայ գլխաւորներին, իշխաններին, ազնուականներին և ընդհանուր կոտորածի է ենթարկում բոլոր հայերին Սուրխաթում, Ղարապաղարում և միւս հայաբնակ տեղերում: Յայսմաւուրբի Յիշատակարանը շատ հետաքրքիր մանրամասնութիւններ է պատմում հայոց գլխաւորներին սպանելու մասին: Փաշան, ասում է նա, քաղաքն առնելուց չետոյ, երեսանց սէր է կապում հայոց առաջաւորների հետ, յաճախակի նոցա իւր մօտ խնջոյքի հրաւիրելով և խօսակցելով նոցա հետ: Նա այդպէս է վարուում, որովհետև միտքը դրած է լինում նոցա մահմեդական կրօնքին դարձնելու: Սակայն նա կամաց կամաց համոզուում է, որ այդ անհնարին է, որովհետև նոքա նորա բոլոր չորդորանքին պատասխանում են, թէ ինքեանք պատրաստ են ամեն զոհողութեան, մինչև անգամ զոհելու իւրեանց կեանքը: Բայց հաւատափոխ և հաւատաւաճառ լինելու չեն ջօժարիլ: Ելն ժամանակ փաշան մտածում է վրէժխնդիր լինել նոցանից: Նա մի օր համոզում է հայերին առանց զէնքի իւր մօտ խնջոյքի գալու, և երբ որ, խնջոյքը վերջանալուց չետոյ, նոքա դուրս են գալիս ապարանքից, որ գտնուում էր «խսկիլէ դափուսիի» մօտ «ի վերայ չորրորդ դստիկոնի պալատին», և սկսում են վաչր իջնել Բարձր սանդուղքից, նա հրամայում է դահիճներին մէկ մէկ սպանել նոցա և ձգել ծովը: Ըլ այնուհետև պակասում է հայ բնակութիւնը Կաֆայում և ընդհանրապէս բոլոր Ղրիմում, որովհետև սպանուողը սպանուում է, գերուողը գերուում է, մնացեալ մասն ևլ ահաբեկուած դուրս է գալիս թերակղզուց և ցրուում զանազան տեղեր՝ Լեհաստան, Մոլդաւիա, Վալահիա և ուրիշ տեղեր: Ճիշդ է, հայերի Ղրիմում մնա-

ցած մասը չետագայ ժամանակներում նորից աճում է, որովհետև ՌԾԱ. թուին Հայաստանից նոր դաղթականութիւն է գալիս Արիւմ, բայց նոքա աչեւս ոչ իւրեանց թուով, և ոչ իւրեանց մտաւոր և բրտրոյական զարգացմամբ, ոչ էլ իւրեանց նիւթական բարօրութեամբ չեն կարողանում հասնել առաջուայ դրութեան: Այդ նոր դաղթականութիւնը, որի թիւը և դաղթականութեան հանգամանքները մեզ լաւ չափանի չեն, որովհետև Յիշատակարանը այդ մասին միայն հարեւանցի է ցիշում, եղել է Զահ-Աբբասի սրշաւանքների ժամանակները: Յայտնի է, որ Զահ-Աբբասի և Օսմանցւոց պատերազմների ժամանակ Հայաստանի զանազան մասերը յաճախակի անտէր մնալով, ենթարկուեցան բազմատեսակ աւազակային խմբերի արշաւանքների, աւազակների, որոնք մեր պատմութեան մէջ չափանի են «Ջալալիք» ընդհանուր անունով: Դոքա գալիս էին, ինչպէս չափանի է, արեւմուտքից—Կիլիկիոյ և Փոքր-Ասիոյ զանազան նահանգներից և բաղկացած էին Օսմանցւոց դէմ ասլստամբած կուսակալներից և Զահ-Աբբասի դէմ պատերազմող Սինան-փաշայի զօրքի մնացորդից: Նամանաւանդ նշանաւոր էին երկու խումբ՝ Քանաքիրլի-Մահմեդի և Թոփալ-Օսմանի, որոնք պատահելով միմեանց Այրարատի Կոտայից գաւառում, պատերազմում են միմեանց դէմ: Թոփալ-Օսմանն այդ ճակատամարտում յաղթող հանդիսանալով, տիրապետում է Այրարատին, հալածում է Ահմադին և ինքն իր բնակութիւնը հաստատելով Արագածոտն գաւառի Կարբի աւանում, այդտեղից ուղարկում է դէպի Հայաստանի զանազան կողմերն իւր հրոսակները: Ահա հէնց այդ ժամանակներն աւերուում ու քանդուում է, 'ի միջի աչոց, և Սիւնեաց նահանգի Ծղուկք գաւառը—Որոտն և Վաղանդ նշանաւոր աւանները, որոնց բնակիչների մի մասն իւր գլուխը գերուելուց, կողոպտուելուց և կոտորուելուց ազատելու համար, թողնում, փախչում է հեռաւոր տեղեր և գալիս է Արիւմ:

Դոցա հետ գալիս է Արիւմ և Աբրահամ Պահլաւունի իշխանը, որի նախնին Պետրոս իշխանը վերոյիշեալ Մաղաքիա աւագ երէցի հետ, պարսպաշինութիւնից չետոյ, վերադարձել էր Արիւմից իւր հայրենիքը և բնակութիւն հաստատել նախիջևանում: Յայսմաւուրքի Յիշատակարանը պատմում է, թէ Որոտնի ընդհանուր աւերմունքի ժամանակ, երբ շատերը գերի էին վարուում, գերուում է և այդ Աբրահամը իւր քեռորդի Պետրոս Բագրատունու հետ: Բայց դոքա ճանապարհին յաջողում են սպանել իւրեանց գերավար չորս պահապաններին և փախչում գալիս են Քէֆէ, որտեղ ազնիւ Մուշալենց Մարգարը 'ի պատիւ դոցա տոհմին շատ սիրով ընդունում է նոցա ու տալիս է բնակութիւն ու մեծամեծ ստացուածք: Պետրոս Բագրատունին 1618 թուին

վախճանում է, իսկ Աբրահամ Պաշլաունին ամուսնանում է Մուղալենց Գէորգ իշխանի Թագուհի դստեր հետ և ունենում է այդ ամուսնութիւնից մի արու գաւակ Տրդատ անունով և մի աղջիկ Աննա անունով: Ահա այդ բարեփառացի Տրդատն ու Աննան են լինում, որ շինում են Քէֆէի Ս. Նիկողայոս եկեղեցին բարձր լեռան վերայ ՚ի քիչատակ 1475 թուի հայ նահատակների և իւրեանց ծնողաց և իւրեանց անունները գրել են տալիս եկեղեցու արտաքին դրան վերայ. դռքա են լինում, որ գրել են տալիս Յաչմաուրբում վերոքիշեալ նշանաւոր Յիշատակարանը և դորա վերջում դնել տալիս իւրեանց ազգաբանութեան ծառը. դռքա են լինում, վերջապէս, որ կարգադրում են, որ իւրեանց չետնորդներն ամեն տարի տօն կատարեն Ս. Նիկողայոս եկեղեցում ՚ի քիչատակ նահատակների և քիշեն իւրեանց ծնողաց՝ մօրը Թագուհի դշխոյն, հօրը-Աբրահամին, ազգականներին՝ Պետրոս Բազրատունուն, աւագ-պարոն Դարիջանենց Մուրատին, Մուղալենց Մարգարին, Ակորին, Աղամալենց Թաթէին, և հետզհետէ անցնեն ազգահամարութեան ծառի վերայ իւրեանց արական ճիւղերը:

1475 թուից մինչև 1778 թուականը, երբ լինում է զաղթականութիւնը դէպի Ռուսաստան, Ղրիմում մնացած հայերը միւս քրիստոնեայ ազգաբնակութեան՝ բազմաթիւ Յոյների և սահաւաթիւ Վրացիների և Վաղհացիների հետ, որոնք գերուած էին և կոչուում էին «եսիրներ», հպատակում են Ղրիմի խանութեան, որ իւր տէրութեան կազմակերպութեամբ և կառավարութեան եղանակով մի ազնուապետական միապետութիւն էր: Խանութեան զուլսը կանգնած էր խանը, որ կառավարում էր երկիրն ազնուական դասակարգի մասնակցութեամբ, որ և սահմանափակում էր խանի միապետական իշխանութիւնը: Այդ ազնուականներն առաջ էին եկել Ղրիմի թերակղզին առաջին անգամ նուաճողներից և զլխաւորապէս «Խորդ-օջաղից», և կոչուում էին բէյեր:

Ժէ. դարում իւրեանց նշանակութեամբ հռչակուում են նամանաւոր բէյական հինգ տոհմ՝ Զերինեան, Բարինեան, Սեղջեփուղեան, Մանսուրեան և Արզինեան, որոնք հետզհետէ մեծամեծ կալուածների տէր են դառնում և խանութեան համարեա թէ բոլոր կառավարութիւնն իւրեանց են սեպակալանացնում: Բէյերի կալուածները կոչուում էին «բէյկներ» և զլխովին ենթարկուած էին բէյերի իշխանութեան: Բէյերն էին իւրեանց բէյիկում ապրող ժողովրդի անձնիշխան տէրն ու պարոնը. նոքա հարկ էին ժողովում նոցանից, դատում էին նոցա և մինչև անգամ մահուան պատիժ էին տալիս, թէև խանութեան մէջ կար և տէրութենական ընդհանուր դատաւոր, որ կոչուում էր «կադի-ասկեր»: Խաները չէին խառնուում բէյերի գործերին. նոքա

մինչև անգամ զլխահարկ ևս չէին առնում բէյիկներում ապրող ժողովրդից: Խանութեան մէջ ոչ մի գործ չէր կարող կատարուել առանց բէյերի խորհրդին: Խանը պէտք է խորհուրդ կազմէր և ստանար բէյերի համաձայնութիւնը պատերազմ հրատարակելու կամ խաղաղութեան դաշը կապելու համար. մի խօսքով ինքը խանն էլ մի մեծ բէյ էր, ունէր իւր առանձին բէյիկը և զանազանուում էր միւս բէյերից միայն նորանով, որ աւելի մեծ բէյիկ ունէր և պատերազմի ժամանակ ընդհանուր զօրավար լինելու և բէյերից մի սալ պաքսիմաւ, հազարական պիաստր և մի գունդ զօրք իւր բէյի առաջնորդութեամբ պահանջելու իրաւունք ունէր:

Բէյերի կրտսեր սերունդը կոչուում էր «էմիր-զադէ» և կազմում էր աղնուական դասակարգի երկրորդ ճիւղը կամ ստորին աղնուականութիւնը, որի անդամները յետագայ ժամանակներում սկսում են կոչուել «մրզաներ», որ ոչ այլ ինչ է. եթէ ոչ աղճատուած «էմիր զադէ» կոչումը: Բացի տոհմական մրզաներից կալին այլ ևս բազմաթիւ ուրիշ մրզաներ, որոնք իւրեանց տիտղոսն իւրեանց կալուածներէ հետ միասին ստացել էին խանից, նորան մի որ և է ծառայութիւն մատուցած լինելու համար դեռ այն ժամանակները, երբ խանութեան մէջ ազատ հողեր, ջրհորներ, աուլներ շատ կալին:

Խանից յետոյ երկրորդ տեղը տէրութեան մէջ իւր նշանակութեամբ բռնում էր «կալփա-դիրէյը», որ տէրութեան ընդհանուր զօրավարը, խանի տեղակալը և ընդհանրական բարձրագոյն դատաւորն էր, և խանի մահից յետոյ մինչև նոր խանի ընտրուելը կառավարում էր տէրութիւնը: Երրորդ անձը տէրութեան մէջ համարուում էր «նուր-րեդինը», որ բռնում էր կալփա-դիրէյի տեղը նորա մահից յետոյ, և, վերջապէս, չորրորդն «օր-բէյն» էր, Պերեկոպի նահանգապետը կամ կառավարիչը:

Բէյերը, մրզաներն իւրեանց բէյիկներից ստանում էին երեք տեսակ հարկ՝ «Ուշուր», — տասանորդ բոլոր պտուղներից, «Ջիքեաթ» — հինգ տոկոս թռչուններից ու անասուններից և «Պետիր» — մի տեսակ հոգևոր հարկ: Բացի սորանից, հարկ էին առնում և օտարադաւաններին սլատկանած վարելահողերից, այգիներից և պարտեզներից: Խանն էլ ուրիշ բէյերի պէս հարկ էր ժողովում իւր բէյիկից, բայց ոչ անձամբ, այլ «աշնաների» — կապալառուների — ձեռքով: Խանին տուած «Ուշուրը» տասանորդ չէր, $\frac{1}{8}$ մասը: Հայերն էլ միւս քրիստոնեաների հետ միասին ապրում էին խանի, բէյերի և մրզաների կալուածներում և ենթարկուած էին այն հարկապահանջութեան, որին ենթարկուած էին և միւս քրիստոնեաները և թաթար ժողովրդի հասարակ դասակարգը: Ղրիմի խանութեան մէջ, եթէ չ'հաշուենք

վերույիշեալ փոքրաթիւ եսիրներին, ստրկութիւն չ'կար ընդհանուր մտքով, բայց որովհետեւ ժողովուրդն ապրում էր բէյլիկներում և ամեն բանում ենթարկուած էր խանի, բէյերի և մրզաների կամայականութեան, կարելի է ասել, որ նոցա դրութիւնը, եթէ ոչ ստրկութեան, գոնէ, խիստ ծառայութեան հաշուի էր: Հաջորդ շարունակում էին պարապել իւրեանց նախկին զրադմուքներով՝ երկրագործութեամբ, պարտիզպանութեամբ, աչգեգործութեամբ, արհեստներով և առևտրով, բայց արդէն չէին կարողանում առաջուայ բարօրութիւնը ձեռք բերել, որովհետեւ ոչ մի արտօնութիւն չունէին, մեծամեծ հարկեր էին վճարում և, որ գլխաւորն է, ենթարկուած էին մեծ կամայականութեան: Սորա վերայ պէտք է աւելացնել և այն, որ հայերն օտարադաւան էին, որ և առիթ էր տալիս իշխող մահմեդականներին խստիւ վերաբերուելու, խէթիւ նայելու նոցա վերայ և ընկած տեղը կրօնական հալածանք չարուցանելու նոցա դէմ: Մի խօսքով այստեղ ևս կրկնուում է այն, որ եղել է և այժմ էլ լինում է բոլոր մահմեդական տէրութիւններում, որոնց սահմաններում քրիստոնեաներ են բնակուում: Սակայն Ղրիմում այս կողմնակի նեղութիւնները տեղի են ունենում տիրապէս առաջին ժամանակները: Յետագայում թաթարները բոլորովին ընտելանում են քրիստոնեաներին, ձեռք են վեր առնում կրօնական հալածանքներից ու նեղութիւն տալուց և սկսում են մինչև անգամ նոցա պաշտպանել և կրօնական արտօնութիւններ տալ: Եւ խանը, բէյերը և մրզաներն այսպէ՛վ էին վարուում, որովհետեւ տեսնում էին, որ իւրեանց բէյլիկներում միակ աշխատաւոր ժողովուրդը քրիստոնեաներն են, որոնք իւրեանց պարտէզներից, այգիներից և վարելահողերից հատուցած մեծաքանակ տուրքով լցնում էին թէ խանի գանձարանը և թէ իւրեանց ձեռքի աշխատանքով մշակում ու հարստացնում էին երկիրը: Քրիստոնեաներն էլ իւրեանց հերթով կամաց կամաց ընտելանում են թաթարներին, ծանօթանում են նոցա տէրութեան և կենցաղավարութեան, կարգ ու կանոնին և, վերջ ՚ի վերջոյ, մշակում են մի տեսակ *modus vivendi*, որ բաւականութիւն է տալիս թէ իւրեանց և թէ տէրերին: Օչդ *modus vivendi*-ն, այդ իւրեանց դրութիւնից ու վիճակից բաւական լինելը, ինչպէս երևում է հանգամանքներից. լինում է ոչ թէ առ հարկի, ոչ թէ որովհետեւ ուրիշ ճար չ'կար, այլ բոլորովին բնական կերպով, այնպէս որ երբ 1778 թուին Ռուսները բռնում են Ղրի՛ը և առիթ է ներկայանում գաղթելու Ռուսաստան և բարւոքելու իւրեանց դրութիւնը, նոքա դժուարանում են, չեն ուզում թողնել իւրեանց համար արդէն երկրորդ հայրենիք դարձած երկիրը: Ռուսաստան գաղթած հայերն իւրեանց գաղթելուց առաջ ապրում են եղել Ղրիմի հետեւեալ տեղե-

րում՝ Քէֆէ, Բախչեսարաչ, Կարասուքազար, Գեօզլիւ, Ակմեզլիդ, Էսկի-Կրիմ քաղաքներում և Թուիլու, Սալա, Սուլթան-Սալա, Օրթալան, Կամշլիկ, Չուրուկսու, Բուրունչուկ Օթար և Թոպչակ զիւղերում:

Ե.

Ղրիմի Ռուսաց զօրքի հրամանատար ժեներալ-պորուչիկ Պրոզորովսկին Ռումեանցովից հրաման ստանալով Ղրիմաբնակ քրիստոնեաներին զաղթեցնելու մասին, առաջին նուագ մեծ դժուարութեան մէջ է ընկնում, որովհետեւ այդ հրամանագրի մէջ չէր չիշուած, թէ արդեօք ստացուած է այդ մասին կաշարուհու հաճութիւնը և թէ պէտք է այդ մասին իմաց տալ խանին, թէ ոչ: Դրութիւնը շատ վաւերիկ էր, որովհետեւ թաթարների ապստամբութիւնն ընկճուած էր, թէև Ղրիմը բռնուած էր Ռուսաց զօրքերով և ճահինգիրէյն ապահով բազմած իւր դահի վերայ, այնուամենայնիւ արգելքներ ու դժուարութիւններ դեռ շատ կային: Հա՛լառակ կուսակցութիւնը Ռուսաց այդ քացւոյ մի կողմից պէտք է մէկնէր նոցա ձգտումով խառնուելու խանութեան ներքին գործերին, միւս կողմից էլ ճահինգիրէյին պիտի ներկայացնէր իբրեւ մի դաւաճան, որ ծախում է իւր երկիրն օտարներին: Բարձր-Դուռն էլ պիտի օգտուէր հանգամանքներից, խլուրտումն ձգէր բոլոր երկրի մէջ, գահալիժէր Ռուսաց կուսակից խանին և իւր ազդեցութիւնն առաջ տանէր: Գաղթականութեան չէր համակրիլ ոչ խանը, որովհետեւ դորանով նա կ'ձգէր իւր վարկն իւր հպատակների առաջ, ոչ ազնուականութիւնը, որովհետեւ դորանով նա կըզրկուէր իւր եկամտի գլխաւոր աղբիւրից, ոչ էլ ինքեանք քրիստոնեաները, որովհետեւ նոքա չէին ցանկանալ թողնել իւրեանց տուն ու տեղը, իւրեանց հայրերի գերեզմանները, իւրեանց սրբատեղիները: Եթէ լինէր կաշարուհու հրովարտակը դեռ կարելի էր, թէև այդ էլ ոչ առանց մեծ դժուարութիւնների, համոզել խանին, որովհետեւ նա բարերարուած լինելով նորանից, չէր անցնիլ նորա խօսքից ու ցանկութիւնից: Ինչ որ վերաբերում էր ազնուականներին ու քրիստոնեաներին, — կարելի էր առաջիններին նիւթական վարձատրութիւն տալով, իսկ երկրորդներին մեծամեծ արտօնութիւններ խոստանալով ու նոցա գլխաւորներին զանազան պատիւներ տալով, գործը մի տեսակ գլուխ բերել: Իսկ կաշարուհու հրովարտակը չ'կար, որովհետեւ Ռումեանցովը կաշարուհուն գաղթականութեան մասին ներկայացրած իւր զեկուցագրի պատասխանը դեռ չ'ստացած արդէն 1778 թուի Փետրուարի 25-ին մասնաւորապէս հրամանագրել էր ձեռնարկել այդ գործին: Պրոզորովսկին կշռելով բոլոր հանգամանքները և գործի դժուարութիւնն

ի նկատի առնելով, անիրադրձելի և անժամանակ է համարում այդ միջոցում այդ խնդրի չարուցանելը և այդ մտքով էլ հենց պատասխան է դրում Ռուսեանցովին: Նա կարծում է, թէ քրիստոնեաներին դադիթեցնելն առիթ կ'տայ Ղրիմի իշխանաւորներին մտածելու, թէ Ռուսաստանը կամենում է տիրել թերակղզուն, Օսմանեան կայսրութիւնն էլ Ռուսաստանի այդպիսի գործողութիւնն այդպէս կ'հասկանայ, որի հետեւանքը կ'լինի պատերազմ, իսկ խանն աւելի շուտով կրհամաձայնի վայելուէ թողակով թողնել խանութիւնը, քան թէ թոյլ տալ քրիստոնեաներին դադիթելու: Սակայն երբ ստացուում է կայսրուհու վերոյիշեալ ուկագն ու ռեսկրիպտը և դոցա հիման վերայ նորանոր հրամանադրեր են հասնում Պրոգորովսկու ձեռքը Ռուսեանցովից և Պատեռնիկինից, նա անչապաղ ձեռնարկում է գործին:

Հրամանատարը նախապէս այդ մասին խորհրդակցում է «ռեզիդենտ» Կոնստանտինովի հետ, որ երկար ժամանակ Ղրիմում ապրած լինելով, շատ լաւ ուսումնասիրել էր թաթարների վարքն ու բարքը, խանութեան կարգն ու կանոնը, չնոց նա կոչում է իւր մօտ Յունաց մետրոպոլիտ Իգնատիոսին և յորդորում է նորան նպաստել այդ գործին, խոստանալով մեծամեծ արտօնութիւններ ժողովրդին և մեծամեծ պատիւներ իրեն մետրոպոլիտին: Նոյն տեսակ յորդորանք և խոստումներ լինում են և Լուսաւորչական հայերի առաջնորդ Մարկոսեան Պետրոս վարդապետին և կաթողիկ հայերի առաջնորդ Վարդերեսովիչ Յակովբ վարդապետին: Քրիստոնեաների հոգեւոր պետերը թէև սկզբունքով տալիս են իւրեանց համաձայնութիւնը, բայց չաջողութեան մասին խօսք չեն տալիս, որովհետեւ գործը դժուար էր և ինքեանք վախենում էին իւրեանց հօտից: Նոքա նախապէս կամենում են իմանալ իւրեանց ժողովրդի միտքը, կամենում են խորհրդակցել իւրեանց հօտի գլխաւորների հետ, կշռադատել գործի կարելիութիւնը, օգտաւէտութիւնն ու վնասակարութիւնը, մի խօսքով կամենում են գործի բոլոր հանգամանքներն, բոլոր մանրամասնութիւններն ի նկատի առնել և այնուհետեւ իւրեանց վերջնական որոշումն յայտնել և մի քանի պայման առաջարկել: Հանգամանքնելը նպաստում են նոցա: Ապրիլ ամիսն էր և զատկական տօների ժամանակը, ուստի և հեշտ էր նոցա չարաբերութիւն ունենալ ժողովրդի հետ, առանց դրդելու թաթար իշխանաւորների կասկածները: Հրահանգ է տրուում քահանաներին մտնել ժողովրդի մէջ և աշխատել հասկացնել նոցա Ռուսաց առաջարկութեան միտքը և դորանից քրիստոնեաների համար ծագելիք օգուտները, հրահանգ է տրուում քարոզիչներին զգուշութեամբ քարոզել եկեղեցիներում և դադիթականութեան համար կամաց կամաց հող պատրաստել, շեշտելով իւրեանց քարոզների մէջ այն անդորր և

խաղաղ կեանքի վերայ, որ նոքա կունենան քրիստոնեայ թագուհու իշխանութեան ներքոյ, այն շլացուցիչ արտօնութիւնների վերայ, որ նոքա կ'վայելեն սերնդէ սերունդ Ռուսաստանում: Ինքեանք հոգևոր պետերն էլ ձեռքերը ծալած չեն նստում. նոքա էլ իւրեանց մօտ մուտք ու ելք ունեցող ժողովրդի գլխաւորներին համոզում և հասկացնում են. ինքեանք էլ ընկած տեղը քարոզում ու աշխատում են ժողովրդին ընտելացնել գաղթելու մտքին:

Միւս կողմից էլ ցրուում, մտնում են ժողովրդի մէջ Պրօպորովսկու և Կոստանդինովի բազմաթիւ հայ և յոյն էմիսսարները, որոնք բարերարուած լինելով պատիւներով, աստիճաններով և նիւթական վարձատրութեամբ, ոչ մի ջանք չեն խնայում յաջողեցնելու գաղթականութեան գործը: Կայսրուհու ռեսկրիպտի ու ուկազի մէջ ասուած էր, թէ պէտք է դործ դնել ձեռքից եկած բոլոր միջոցները, որ քրիստոնեաները յօժարակամ համաձայնեն թողնել Ղրիմը և տեղափոխուել Ազովի և Նովոռուսսիոյ նահանգները: Ռուսաց գլխաւոր պաշտօնեաները ռեսկրիպտի այդ կտորի միտքն այնպէս էին հասկացել, թէ պէտք է գործ դնել անխտիր ամեն միջոց քրիստոնեաներին գաղթեցնելու համար, և համաձայն դորան էլ հրահանգներ էին տուել իւրեանց էմիսսարներին, իւրեանց ստորադրեալ պաշտօնեաներին: Թաթարները, եթէ յաջողի նոցա նորից ապստամբել, միտք ունին հալածանք չարուցանելու քրիստոնեաների դէմ և բռնութիւն դործ դնելու: Օսմանցիք, եթէ կարողանան զօրք իջեցնել Ղրիմի ափերը, անպատճառ վրէժխնդիր կ'լինեն քրիստոնեաներից, իբրև Ռուսաց դաւանակիցներից և կողմնակիցներից. խանը բաշխել է քրիստոնեաներին Ռուսաց և հրամայել է նոցա փութով թողնել թերակղզին և տեղափոխուել Ռուսաստան, և այլն և այլն—ահա այն սովորական յորդորանքը, որ անում էին էմիսսարները, այն սպառնալիքները, որ տալիս էին քրիստոնեաներին գաղթեցնողները, կամենալով ահ ձգել ժողովրդի սիրտը և ստիպել նոցա շուտով կատարելու Ռուսաց ցանկութիւնը:

Ժողովուրդը մի կողմից լսելով իւրեանց հոգևոր պետերի յորդորանքը, միւս կողմից էլ ահաբեկուած սպառնալիքներից, չ'զիտէր, թէ ինչ անէր. թողնել գեղեցիկ Ղրիմը, ձգել տուն-տեղ, արտ ու դաշտը սլարտէզ ու աչգի, եկեղեցի ու վանք և գնալ մի անձանօթ երկիր, նա չէր ուզում, բայց մնալ ու զոհ դառնալ թաթարների ու Օսմանցիների բռնութեան դորանից էլ վախենում էր: Երկբայութիւնը, կասկածը, տատանումը տիրել էր ամեն տեղ և առաջ բերել մի ընդհանուր խլրտում բոլոր քրիստոնեաբնակ վայրերում, որ, յայտնի բան է, չէր կարող աննկատելի մնալ, խուսափել տիրող թաթարների աչքից,

Ինքեանք քրիստոնեաներն էլ շատ տեղ չէին ծածկում եղելութիւնը թաթարներից, արձակ-համարձակ ձեռնարկելով ծախելու իւրեանց անշարժ կալուածները և պատրաստուելով գաղթելու, պատճառը հարցնողներին էլ պատասխանելով, թէ խանը քրիստոնեաներին տուել է ուսաներին, չ'պատրաստուողներին էլ չորդորելով, թէ ինչ էք հանգիստ նստել, միթէ չգիտէք, որ հրաման կայ թողնելու ու հեռանալու Արիմից. նոյն իսկ հայ քահանաները դէռում են թաթարների մօտ և յայտնում են նոցա գործի եղելութիւնը:

Սակայն չ'նայելով այս բոլորին, քրիստոնեաները դարձեալ դանդաղ են շարժուում և գաղթել ցանկացողների թիւը շատ չնչին է լինում, իսկ մեծամասնութիւնն ամենեւին հակումն չի ցոյց տալիս գաղթելու: Այսպէս շարունակուում է գործը, մինչև որ ժեներալ-պորուչիկ Պրոգորովսկին, որի չարաքերութիւնը պանազան պատճառներով լարուած է լինում Ռումեանցովի հետ, թողնում է իւր պաշտօնը և հեռանում Արիմից և նորա տեղը հրաւիրում է բռնել նշանաւոր Ալէքսանդր Վասիլեվիչ Սուվորովը, որ նոր եռանդ ու աշխոյժ է մտնում այդ գործի մէջ: Բայց այդ գործն այնքան դժուար է լինում, որ մինչև անգամ Սուվորովը ևս, որի վճռականութիւնը և իւր նպատակին հասնելու համար ոչ մի արգելքի առաջ կանգ չառնելը յայտնի է պատմութիւնից, առաջին նուազը տատանուում է. նա իւր զեկուցումներից մէկի մէջ այդ մասին գրում է Ռումեանցովին. «Մէկ Ալբանացի անցեալ խառնակութիւնների ժամանակ ամուսնացել էր մի թաթար կնոջ հետ, որ շուտով դորանից չետոյ մկրտուել էր: Թաթար կառավարութիւնը պահանջում էր, որ կինը թողնէ քրիստոնէութիւնը և նորից մահմեդական դառնայ, ծնողներն էլ համոզում էին նորան, բայց նա չէր ուզում և իւր հերթով խորհուրդ էր տալիս իւր ծնողներին, որ նոքա էլ քրիստոնեայ դառնան: Ռեզիդենտը թաթար պատգամաւորների ներկայութեամբ քննելով այդ գործը, եկաւ այն եզրակացութեան, որ «տրակտատին» հակառակ է այդ կնոջը կառավարութեան ձեռքը յանձնելը, որի համար և կառավարութիւնը խռովեց ինձանից և մինչև անգամ սպառնալիքներ կարդաց: Այժմ նորին պաշտառապալութիւն իշխան Գրիգորի Ալէքսանդրովիչը գրում է ինձ քրիստոնեաների յայտնի գաղթականութեան մասին: Ուսանց մեծ խրոպութեան այդ գործը գլուխ բերել չի կարելի, թէև ես բոլոր քանքս գործ եմ դնում դորանից ծագելիք խառնակութիւնների առաջն առնելու»:

Հոգևոր պետերը, վերջապէս, 1778 թուի Յուլիսի 17-ին ներկայացնում են իւրեանց պաշտանները և խնդրում են, որ կայսրուհին յառաջագոյն իւր բարձր հրովարտակով հաստատէ այդ պաշտանները և

յետոյ արդէն ձեռնարկուի ժողովրդին տեղահան անելու գործին։ Որոշուում է երկու տեսակ պատգամաւորութիւն ուղարկել Ռուսաստան.—մէկն Ազովի նահանգն՝ առաջարկուած հողերը դիտելու համար, միւսը Պետերբուրգ՝ կաշարուհուն ներկայանալու, պաշտանագիրը հաստատելու և արտօնութիւնների հրովարտակը ստանալու համար. որոշուում է նոյնպէս գաղթականութեան գործին աջակիսի ձև տալ, որ իբրև թէ Ռուսաստանը չէ, որ գաղթեցնում է ժողովրդին, այլ ինքը քրիստոնեայ ժողովուրդն է, որ թոյլատուութիւն է խնդրում տեղափոխուելու Ռուսաստան։ Միևնոյն ժամանակ Սուվորովը յորդորանքով, սպառնալիքով, աջ ու ձախ պատիւներ, աստիճաններ, ընծաներ բաժանելով, սորան-նորան ազդեցիկ մարդկանցից նիւթական վարձատրութիւն տալով, կարողանում է համոզել նոցա, որ այլ ևս գործը չետ չ'ձգեն և հէնց մենչև պատգամաւորների վերադառնալը հոգևոր պետերը հրովարտակներ արձակեն իւրեանց հօտերին և սկսեն տեղափոխուել։ Ի միջի այլոց, Իգնատիոս մետրոպոլիտին տրուում է ընծայ փողով՝ 6,500 ռ., Պետրոս վարդապետին 2,800 ռ., Յակովբ Վարդերեսովիչին 1,500 ռ., և երեքին միասին կառքերի, արդուզարդի և ձիերի փող 2,799 ռուբլի։

Հոգևոր պետերի Սուվորովին և նորա ձեռքսվ Ռումեանցովին և կաշարուհուն ներկայացրած պաշտանագրի կէտերից արժանի են ուշադրութեան հետեւեալները. Ա. Բաւականացուցիչ վարձատրութիւն Ղրիմում թողնելիք անշարժ կալուածների համար, Բ. Արքունի ծախսով տեղափոխութիւն, Գ. Կաշարուհու անունով խոստացած հողը Դնեպր, Սամարա և Օրեոլ գետերի ջրաբաշխում, Դ. Անխառն բնակութիւն միւս բոլոր ազգաբնակութիւնից առանձին, և մի մի քաղաք իւրեանց գիւղերով իւրաքանչիւր ազգի համար առանձին, Ե. Հոգևոր պետերի իւրեանց հօտերի վերայ լիազօրութիւն, Զ. Տասնամեայ ազատութիւն բոլոր հարկերից և բոլոր մասնաւոր ու արքունի պարտականութիւնից, Է. Ազատութիւն զինուորագրութիւնից, Ը. Ազատ կառավարութիւն իւրեանց օրէնքներով և իւրեանց միջից ընտրուած մարդկանց ձեռքով տեղական նահանգապետի հսկողութեան ու սլաշտպանութեան ներքոյ, Թ. Սերմացու առաջին տարին մինչև նոր ցորենի հասնելը և նիւթեր ու ատաղձ շինութիւնների համար, Փ. Վարձատրութիւն թողնելիք ցանքսերի և թաթարների վերայ մնալիք պարտքերի փոխարէն։

Խանը, որ մինչև այդ ժամանակները չ'տեսնողս և չիմացողս էր լինում, թէև նորա ձեռքը թաթար իշխանաւորներից և ազնուականներից հասել էին բազմաթիւ թղթեր, որոնց մէջ մանրամասն նկարագրուած էին Ռուսաց ռեզիդենտի և լիազօրի գործողութիւն-

ները գաղթականութեան վերաբերմամբ, տեսնելով, որ, ճիշդ որ, քրիստոնեաները պատրաստուում են գաղթելու, և խելամուտ լինելով այն մեծամեծ վնասների մասին, որոնք կարող են առաջ գալ քրիստոնեաների հեռանալուց, իւր ստացած բոլոր թղթերն իւր նոցա տուած պատասխանագրերի հետ միասին ուղարկում է Սուլորովին և Ռումեանցովին, աւելացնելով իւր կողմից, թէ ինքը բոլորովին չի հաւատում այդ բանին, որովհետեւ չի հասկանում, թէ ինչ կարիք ունի Ռուսաստանը զրիմաբնակ քրիստոնեաներին և ինչ օգուտ կարող է ստանալ նա, գաղթեցնելով նոցա իւր սահմանները: Սուլորովը և Ռումեանցովը, որոնք մինչև այդ ժամանակները գաղթականութեան մասին աւելորդ էին համարել իմաց տալու Ղրիմի տիրոջը, հաւաստիանալով, որ բանն արդէն բացուած է և պաշտօնապէս մեկնութիւն պէտք է տալ իւրեանց գործողութիւնների համար, պատասխանում են, թէ այդ գործում ոչ ռեզիդենտը, ոչ էլ լիազօրը մատ ունին, այլ ինքեանք քրիստոնեաներն են, որ ձգտում են գաղթելու և կայսերուհու հովանաւորութեան տակ մտնելու: Խանը պիտի հասկանայ, որ կայսրուհին չէր կարող մերժել իւր կրօնակիցների խնդիրքը, որովհետեւ նոքա կարող են ենթարկուել թաթարների հայաճանքին, եթէ նորից ապստամբութիւն պատահի Ղրիմում, կարող են ենթարկուել Օսմանցիների վրէժխնդրութեան, եթէ միայն նոքա զան Ղրիմ: Սակայն խանն այդ բանից ամենևին չ'պէտք է նեղանայ, կայսրուհու պահանջը մի շատ չնչին տրիտուր է այն բոլոր բարիքների փոխարէն, որ նա առատութեամբ բաշխել է իրեն խանին և ընդհանրապէս բոլոր թաթարներին, նոցա ազատ կացուցանելով Օսմանցիների իշխանութիւնից և ծառայութիւնից, նամանաւանդ որ նիւթական վնաս էլ չի լինի, որովհետեւ կայսրուհին հրամայել է վարձատրել նորան այն բոլոր կորուստների համար, որ նա կուենայ քրիստոնեաների գաղթելու պատճառով: Բայց խանը թէև առերես ցոյց է տալիս, թէ ինքը խոնարհում է կայսրուհու ցանկութեան առաջ, այնուամենայնիւ խռովում է ռեզիդենտից և լիազօրից և ձեռքի տակից ամեն միջոց գործ է դնում կասեցնելու գաղթականութիւնը. նա մի կողմ թողնելով այն մեծ նիւթական վնասը, որ պէտք է ստանար իւր երկիրը գաղթականութիւնից, նա մանաւանդ ցուում է այն բարոյական վնասի համար, որ պէտք է հասնէր իրեն զորանից: Հակառակ կուսակցութիւնը պէտք է ասէր, թէ ահա արդարացաւ իւր ասածը, — թէ Զահինգիրէյը Ռուսի մարդ է, թէ նա իւր հայրենիքը ծախել է Ռուսներին, և այլն և այլն:

Գաղթականութեան կասեցնելն էլ արդէն շատ հեշտ էր, որովհետեւ մեծամասնութիւնը, ինչպէս արդէն ասացինք, չէր ուզում

Թողնել իւր տունն ու տեղը կասկածում էր, չէր հաւատում խոստումներին, նամանաւանդ որ դեռ իւրեանց առաջարկած պայմաններն էլ չէին հաստատուած, պատգամաւորները դեռ չէին վերադարձած և կապերական հրովարտակն էլ այդ մասին դեռ չէր հրատարակուած:

Հայ և յոյն հասարակութիւնների ներկայացուցիչները հաւաքուում են Բախչիսարայ և մատուցանում են խանին մի մի խնդրագիր, որոնց մէջ նոքա բողոքում են գաղթականութեան ոյէմ: Հայերն իւրեանց աղերսագրի մէջ ասում էին. «Մենք Ձեր ծառաներս և հպատակներս ահա այս երեք հարիւր տարի է, որ բնակում ենք Ձեր տէրութեան մէջ և ոչ մի անհանգստութիւն չենք տեսել: Այժմ մեզ կամենում են հալածել, հանել այստեղից: Մենք աղերսում ենք յանուն Աստուծոյ, Մարգարէի և Ձեր նախնեաց, որ Դուք ազատէք մեզ այս բռնութիւնից. դորա համար մենք հանապազ աղօթող կ'լինենք Բարձրեալին Ձեր կենաց համար»:

Թաթար իշխանաւորներն էլ խնդրագիր են մատուցանում Ռումանցովին և կայսրուհուն, մինչև անգամ իսկ պատգամաւորներ են ուղարկում Պետերբուրգ, և լիազօրից 25 օր ժամանակ են խնդրում մինչև որ ստացուի իւրեանց գրածների պատասխանը: Բայց ոչ մի բան չի օգնում, 25 օրուայ ժամանակամիջոցն իսկ չի տրուում: Կապերուհու հրամանն անդառնալի էր. քրիստոնեաները նլ.տ.ք է գաղթէին:

Այլ այնուհետև անտանելի է դառնում քրիստոնեաների դրութիւնը Ղրիմում 1778 ի Յուլիսի 17-ից մինչև Սեպտեմբերի 28-ը, երբ կատարուում է գաղթականութիւնը, որովհետև թաթարները կատաղած սկսում են սոսկալի նեղութիւններ տալ նոցա և վրէժխնդիր լինել: Զիշդ է, Ռուսաց զօրքերը պաշտպանում են նոցա և թաթարներից. բայց ծածուկ, Ռուսաց զօրապետների աչքից ու հսկողութիւնից հեռու տեղերում, շատ նեղութիւնների են ենթարկուում նոքա, մեծամեծ անօրէնութիւններ ու անգթութիւններ են կատարում նոցա զլխին: Վախը, նեղութիւնը, տաճնապն աչնքան սաստիկ են լինում, որ Իգնատիոս մետրասլովիտը փախչում է Ռուսաց բանակը և պաշտպանուում զօրքի մէջ, իսկ Պետրոս վարդապետը շտապում է Քէֆէ և պատսպարուում է հայերի բազմութեան մէջ:

Գաղթականութիւնը կատարուում է երեք մեծ խմբերով՝ Յուլիսի 18-ին, Օգոստոսի 20-ին և Սեպտեմբերի 28-ին: Զիշդ է, Սեպտեմբերի 28 ից յետոյ էլ դեռ մինչև հոկտեմբերի 19 ը շարունակուում է գաղթականութիւնը, բայց դոքա արդէն յետ ընկածներն են լինում, որոնք իւրեանց մասնաւոր գործերով մնացած են լինում Ղրիմի զանազան քաղաքներում: Միայն հոկտեմբերի 19-ին ճանապարհ են

ընկնում դէպի Ռուսաստան գաղթականների յետևից և Իգնատիոսն ու Պետրոս Մարկոսեանը:

Գաղթականներին հարուստներն իւրեանց սալներով, իսկ աղքատները արքունի սալներով հասնում են Պերեկոպ կամ, ինչպէս հայերն ասում են, «Դուռն», որտեղից հետզհետէ առնում են նոցա Ազովի նահանգապետ Չերտկովի պատրաստած վեց հազար սալերը և տեղափոխում են դէպի Ալեքսանդրովսկի բերդաւանը և այնտեղից էլ դէպի Դնեպր գետի Սամարա և Օրիօլ ճիւղերը, որոնց մէջ գտնուած տարածութիւնը տէրութիւնը խոստացել էր տալ նոցա բնակութեան համար: Ղրիմաբնակ հայերից գաղթում են ընդամենը—12,598 հոգի, որոնց ինչ տեղերից լինելը և քանի հոգի արական և իգական սեռին պատկանելը կարելի է տեսնել հետևեալ աղիւսակից.

Ա Ղ Ի Ի Ս Ա Կ

ԻՆՉ ՏԵՂԵՐԻՑ		Երկու սեռի անձանց թիւը		Ընդամենը
		Արական	Իգական	
Փաղաքներ	1. Քէֆէչից	2,781	2,730	5,511
	2. Քախչիսարայից	702	673	1,375
	3. Կարասու-Քազարից	1,419	1,390	2,809
	4. Գեօղլիւից	667	637	1,304
	5. Ակ-Մեզիդից	145	114	259
	6. Էսկի-Կրիմից	87	73	160
		5,801	5,617	11,418
Գիւղեր	1. Թոփու	112	100	212
	2. Սալա	115	109	224
	3. Սուլթան-Սալա	34	23	57
	4. Օրթալան	214	192	406
	5. Մէլիք	39	33	72
	6. Կամըշլըկ	62	59	121
	7. Չուբուկ-Սու	20	20	40
	8. Քուբուկուկ-Օթար	17	21	38
	9. Թոփչակ	7	3	10
		620	560	1,180

Զ.

Գաղթականների Ռուսաստանի սահմաններն ոտ կոխելուն պէս, սկսուում են նոցա նեղութիւնները: Նոքա նեղուում են ցրտաշունչ քամիներից, աշնան անձրևներից, որովհետև ցրտերն արդէն սկսուել էին, իսկ գաղթականներն անձանօթ լինելով Ռուսաստանի կլիմային, դուրս էին եկել Ղրիմից իւրեանց ամառուայ թեթև զգեստներով: Արշդ է, Ազովի նահանգապետը և գաղթականութեան գլուխ կանգնած միւս գործակալները շտապում են արքունի ծախսով տաք վերնագգեստներ ու մուշտակներ բաժանել չքաւորներին, բացց հր մէկին և հրքան պէտք է բաժանէին, որ կարողանային գաղթականների այդ կարօտութիւնը լրացնել: Հարուստների թիւը շատ քիչ էր, մեծամասնութիւնը չքաւոր էր: Բացի դորանից, գաղթականներին հարկաւոր էր հանգստութիւն, տաք անկիւն, որ նոքա, ի հարկէ, չէին կարող ունենալ, քանի որ պէտք է շարունակ ճանապարհ գնային, մինչև որ հասնէին նշանակուած տեղերը:

Այդպիսի հանգամանքներում նոքա ճանապարհորդում էին և անձրևի տակ, ենթարկուում էին և ցրտին և դառնաշունչ հողմերին, ստիպուած էին լինում քնել յաճախակի բացօդեայ կամ բարակ վրանների տակը, ուրեմն ինչ տաք զգեստ կարող էր օգնել նոցա, եթէ մինչև անգամ բոլորեքեան ևս ունենային, բոլորեքեան ևս տաք հանդերձներ ստանային տէրութիւնից: Նամանաւանդ ցաւալի էր մանուկների, կանանց, ծերունիների, հիւանդների և անկարողների դրութիւնը: Նոքա չ'կարողանալով դիմանալ անսովոր կլիմային, երկար ճանապարհի դժուարութիւններին, զրկուած լինելով տաք, սննդարար կերակուրներից, հարիւրներով մեռնում էին և իւրեանց գերեզմանների անշուք թմբիկներով զարդարում էին այն ընդարձակ, միասուսակ, ձանձրալի փոշոտ դաշտավայրը, որ ձգուում է Պերեկոպի պարանոցից մինչև Դնեպր գետի Սամարա և Օրիօլ ճիւղերը և որի միջով յամրաքաղ շարժուում էին Ղրիմի «մաջառ-արաբաները» և նահանգապետի ուղարկած ռուսական սալերը, որոնց վերայ բարձուած էին գաղթականների բոլոր շարժական գույքը, եկեղեցիների սուրբ սպասները, անօթները, զգեստները, պատկերները և մինչև անգամ խաչքարերը և եկեղեցիների հին դռները:

Ի մեծ զարմանս գաղթականների երբ նոքա հետզհետէ տեղ են հասնում, կարելի չեն համարում տալ նոցա Դնեպր, Սամարա և Օրիօլ գետերի մէջ գտնուած տարածութիւնը, որ տեսել և հաւանել էին նոցա պատգամաւորները և որ, ինչպէս ասացինք, խոստացուած էր

նոցա, որովհետև այդ տեղերը մասամբ արդէն վաղուց բռնուած էին, մասամբ էլ բռնուելու վերայ էին արքունի և կալուածատիրական գիւղացիների բնակութեամբ. կարելի չեն համարում տալ նոցա և Եկատարինապոլսն իւր գաւառով, որ խնդրում էին գաղթականները, ցանկալով մօտ լինել Դնեպրին, որ կարողանան օգտուել գետի ընձեռած առևտրական գործողութիւնների յարմարութիւնից և ձկնորսութիւնից:

Գաղթականների բնակութեան համար շատ ընտիր տեղեր կային և Դնեպրի ափին Ադերասնդրեան ամրոցից սկսած դէպի ցած, բայց այդ էլ նահանգապետն անյարմար էր համարում տալու գաղթականներին, որովհետև այդ հողերը շատ մօտ էին Ղրիմին: Կարելի չեն համարում, վերջապէս, գաղթականներին բնակեցնել, ձմեռն անցկացնելու համար, Օրիօլ գետի վերայ գտնուած Նովոսելիցա, Կամենկա, Պրոտովի և միւս գիւղերում, ինչպէս ինքեանք գաղթականներն էին ցանկանում և ինչպէս որ արդէն խոստացուած էր նոցա, այսինքն այդ գիւղերի բնակիչների երկու տունը մէկ անելով և այդպիսով իւրաքանչիւր գիւղում տների կէսը դատարկելով և գաղթականներին տալով, այլ առաջարկում են նոցա բնակել նոյն Օրիօլ գետի վերայ գտնուած միւս գիւղերում, ուղղակի ռուս գիւղացիների տներում, որպէս զի նոքա կարողանան առաջին նուագ օգնութիւն ստանալ ռուսներից և ընտելանան այն ժողովրդի վարք ու բարքին, լեզուին ու կենցաղավարութեան տարազին, որի հետ նոքա այնուհետև պէտք է ապրէին:

Այսպիսի հանգամանքներում գաղթականներն ընկնում են անելանելի դրութեան մէջ. նոքա ստիպուած են լինում կամ իւրեանց վրաններով թափառել տեղից տեղ ձիւն-ձմեռ օր, կամ միմեանցից շատ հեռու ընկած գիւղերում երկու-երեք ընտանիք մի տան մէջ ապրել և կամ այստեղ ու այնտեղ ժամանակաւոր հիւղեր շինել ու բնակել անտէր, անօգնական, որից 'ի հարկէ, շատերը հիւանդանում են, շատերն էլ մեռնում են, չենք խօսում արդէն այն անտանելի նեղութիւնների մասին, որ նոքա քաշում են չքաւորութիւնից, աւագակների յարձակումներից ու կողոպտումներից և ուրիշ այդպիսի դէպքերում սովորաբար տեղի ունեցող պատահարներից: Դեռ այս բոլորը բաւական չէր, Պետրոս վարդապետն էլ, որ հայերի միակ խնամակալն էր, միակ ներկայացուցիչն իշխանութեան առաջ, անտանելի նեղութիւններից հիւանդանում է և 1779 թուի Յունուարին մեռնում ու թաղուում է «Սամարում», իւր սկսած գործի վերջը չ'տեսնելով: Նորան տիրապէս հալ ու մաշ են անում ոչ այնքան ճանապարհի դժուարութիւնը և Սամարում քաշած նեղութիւնները, որ-

քան ժողովրդի իրաւացի տրտուհը և այն միտքը, թէ ինքն է եղել պատճառ խեղճերի այդ դրուժեան, Գաղթականները մնում են բոլորովին անտէր-անտիրական, խեղճ, աղքատացած և օտարներ լինելը ցրուած: Դրութիւնը յուսահատական էր, համաճանախները վհատեցուցիչ:

Այդ դժուար դրութեան մէջ թշուառ ժողովրդի աչքերը դառնում են դէպի Ռուսաստանի այդ ժամանակուայ հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արղութեանը, որի մօտ նոքա դեռ Պետրոս վարդապետի կենդանութեան ժամանակ պատգամաւորութիւն էին ուղարկել և խնդրել, որ նա գործ դնէ իւր ազդեցութիւնը և նպաստէ հրովարտակր փութով ստանալու գործին: Ճիշդ է, նոքա դեռ Արիմից հրովարտակր ստանալու համար պատգամաւոր էին ուղարկել Պետերբուրգ իւրեանց երևելիներէ՝ Փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւնին և Փառակեցի Տէր Ոսկանի որդի Կարապետին, բաց նոքա տեղական լեզուին և կարգ ու կանոնին անձանօթ լինելով, չէին կարողացել հասնել իւրեանց նպատակին, նամանաւանդ որ պատգամաւորներից մէկն էլ՝ Տէր-Ոսկանի որդի Կարապետը մեռել էր մայրաքաղաքում:

Նոյն ժամանակ 1779 թուի Ապրիլի 18-ին գաղթականները բողոքախառն խնդրադիր են ուղարկում ժեներալ Սուվորովին և իշխան Պատեմկինին, նկարագրում են նոցա իւրեանց կացութիւնը և իւրեանց ցաւերին դեղ ու դարման են հայցում: Այդ խնդրագրերից, որոնցից աւաջինը գրուած է ամբողջ հայ հասարակութեան բերանից, իսկ երկրորդը Կարապետ Ոսկանեան, Սարգիս Մաթիվէլեան և Յակովբ Օքսենտեան երևելիների բերանից, երևում է, որ գաղթականները, բացի նորանից, որ այդ ժամանակները չեն ստանում եղել խոստացուած պաշարեղէնը, ռոճիկը, ցանկացած հողերը, պատրաստի բնակարաններ Արիմում թողածի փոխարէն, բացի նորանից, որ նոքա անգաղար ենթարկուել են եղել բազմադիմի զրկանքների, որից ունեւորներն անդամ այն տեղն են հասած եղել, որ ողորմութիւն են ժողովում եղել, շատերն էլ չնչին փողերով իւրեանց զաւակներին սորան նորան ծառայութեան տալով և թեփ ուտելով են անցկացնում եղել իւրեանց օրերը, վերջապէս, բացի նորանից, որ նոքա ապրելուս են եղել արձակ դաշտում, ենթարկուելով անձրևի, արևի և եղանակների զանազան փոփոխութիւնների վնասակար ազդեցութեան, որից շատ շատերը մեռնում են եղել, այլ և տեղական իշխանութիւնը ևս կամենում է եղել երկրագործներին բաժանել և հեռու Տերս գետի ափին բնակեցնել և ստիպում է եղել, որ գաղթականները ստորագրութիւն տան, թէ ինքեանք բաւական են իրենց տրուած անփայտ և

անջրդի հոգերից և առհասարակ իւրեանց դրութիւնից և մինչև իսկ արգելում են եղել բարձր իշխանութեան խնդրագիր կամ որ և իցէ թուղթ ուղարկելու:

Յովսէփ արքեպիսկոպոսի մօտ ուղարկած պատգամաւորները՝ կապիտան Յովհաննէս Ուրահամեանը, Փառակեցի Պետրոսի որդի Մկրտիչը, Մահտեսի Դանիէլը և միւսները պատահում են առաջնորդին այն ժամանակ, երբ նա հաշտարխանից դուրս գալով, ճանապարհ էր ընկել զնայու Պետերբուրգ հացոց եկեղեցին, որի շինութիւնն այդ ժամանակ արդէն վերջացել էր, օծելու: Պատգամաւորները ներկայանում են նորան, յայտնում են նորան իւրեանց վիշտն ու ցաւերը և խնդրում են նորա աջակցութիւնը հրովարտակը ստանալու համար: Առաջնորդն ընդունում է նոցա գուրգուրալով, քաջաբերում, սիրտ է տալիս և խոստանում է նոցա համար անել ամեն բան, ինչ որ միայն իւր ձեռքից կ'գայ և նոցա իւր հետ առնելով, տանում է Մոսկուա, այնտեղից էլ Պետերբուրգ: Այդ ժամանակից է իսկապէս սկսում Յովսէփի նախիջևանցւոց հովուելու գործը, որովհետև թէև տակաւին պաշտօնապէս ոչ կաթուղիկոսից, ոչ էլ տէրութիւնից է յանձնուած լինում նորան զաղթականների հոգսը, բայց նոցա բոլոր կարեւոր գործերը՝ արքունիքի հետ զաղթականների վերաբերութեամբ բանադնացութիւններ անելը, խնդիրներ մատուցանելը և հրովարտակ ստանալը նա է կատարում:

1779 թուի նոյեմբերի 14-ին պատգամաւորների հետ միասին կայսրուհուն աղերսադիր մատուցանելուց չետոյ, վերջապէս, առաջնորդը կարողանում է չափողեցնել գործը, և Պատեօմկինի և Յովհաննէս աղա Նղիազարեանի միջնորդութեամբ ստանում է ցանկալի հրովարտակը: Նա իսկոյն և եթ յանձնում է հրովարտակը պատգամաւորներին և ուղարկում է նոցա Վատարինասաւա, պատուիրելով, որ Նոքա շտապով ժողովեն լուսաւորչական հայերին և տանեն հրովարտակում նոցա համար նշանակուած տեղը, իսկ ինքը մնում է Պետերբուրգում աւարտելու այն գործը, որի համար իսկապէս եկել էր - օծելու նորակառուց եկեղեցին: Պատգամաւորները շտապում են կատարել սրբազանի հրամանը, Նոքա հասնում են զաղթականների ցրուած տեղերը, հապնեալով ժողովում են լուսաւորչական հայերին և տանում են նոցա դէպի Դօնի ափը: Զարչարուած, տանջուած ժողովուրդը տեսնելով պատգամաւորներին և նոցանից տեղեկանալով հրովարտակի ստացուելու մասին, կարծես մի առժամանակ մոռանում է իւր կրած նեղութիւնները, իւր աղքատութիւնը, տնանկութիւնը: Նա խրախուսուում է և մի վերջին անգամ էլ ճիգ թափելով հաւաքում է իւր ունեցած-չունեցածը և հասնում է այն տեղը, որ կոչւում էր «Ռոս-

տով սրբոյն Դմեդրի», 1780 թուի Յունուարի 14-ին: Իսկ կաթողիկէայեցիք, որոնց թիւը հասնում է եղել 80 տան, առանձին հրովարտակ են ստանում և բնակում «ի Սամար առ Տնիրէր գետով», Կատարինասլաւ քաղաքի մօտ, որտեղ հրովարտակի գորութեամբ տրուում է նոցա ընտիր հոգեր թէ քաղաքում և թէ նորա շրջակայքում:

Յովսէփ արքեպիսկոպոսը մայրաքաղաքի եկեղեցու օծման շքեղ հանդէսը կատարելուց յետոյ, պատրաստուում է ճանապարհ ընկնել զնալու գաղթականների մօտ և հոգալու նոցա քաղաքի հիմնարկութեան, շինութեան և կառավարութեան գործերը, որովհետեւ արդէն թէ մարմնաւոր և թէ հոգեւոր իշխանութիւններից նորան էր յանձնուել գաղթականների հովուելը: Այդ մասին արդէն կայսերական հրովարտակ էր հրատարակուել և Պատեօմկինի ձեռքով հրաման էր արձակուել Ազովի նահանգապետ Չերտկովին, որ նորեկ հայերը ևս, ինչպէս Ռուսաստանի բոլոր հայերը, պէտք է ենթարկուեն Արդութեանի առաջնորդութեան իրաւասութեան: Ստացուել էր և երջանկալիշատակ Սիմէօն կաթողիկոսի կոնդակը, որով նա պատուիրում և յորդորում էր իւր սիրասուն աշակերտին շտապել, զնալ գաղթականների բնակութեան տեղը և ստանձնել նոցա լսնամելու գործը:

1780 թուի Մայիսի 9-ին առաջնորդը Յովհաննէս աղա Լազարեանի հետ ներկայանում է կայսրուհուն և թագաժառանգին «Յարսկի-Սելօ» ամարանոցում. նա շնորհակալութիւն է մատուցանում իրեն շնորհած պարգևների համար և մնաս բարեաւի հրաժեշտը տալով, ճանապարհ է ընկնում գէպի «Ռոստովի ֆորշտատը», ուր և ժամանում է նոյն թուի նոյեմբերի 14-ին և ձեռնարկում է հիմնարկելու Նախիջևան քաղաքը և նորա հինգ գիւղերը՝ Մեծ-Սալա, Սուլթան-Սալա, Թոփտի, Չալթիր և Նիսուխիալ:

Տէրութիւնը բոլոր գաղթականութեան գործի վերայ ընդհանրապէս ծախսում է 75029 ռուբլի 92 կ., որի կէսը մօտաւորապէս ծախսուում է Հայերի վերայ, որովհետեւ Հայերն իւրեանց թուի քանակութեամբ կազմում էին համարեալ թէ բոլոր գաղթականների կէսը:

Թէ քնչ աւարականների և գաղթականների ձր պիտոյքների վերայ որքան է ծախսուել այդ գումարից, — այդ կարելի է տեսնել հետեւալ հետաքրքրական «Ճախուց-ցուցակից», որ մենք քաղելով Ն. Դուբրովինի պաշտօնական վաւերացումներից, զնում ենք այստեղ:

ՅՈՒՅԱԿ ԽՆԽՈՒՅ ԵՂԵԼՈՅ ՅԱՐՔՈՒՆՈՒՍՑ ՎՍՍՆ ԳՆՂ- ԹԱԿՆՈՒԹԵՍՆ ՔՐԻՍՏՈՆԵՅՑ:

		Ռուբ.	Կ.
1	Իգնատիոս մատարապոսին պարգև	6,500	
2	Հայոց վարդապետ Մարկոսեանին պարգև	2,890	
3	Վաթիկյան պատեր Յակովբին պարգև	1,250	
4	Դոցա երեքին միասին կառքերի, ձիերի, լուծքի և ուրիշ պարագաների փող	2,799	
5	Հոգևոր և աշխարհական երեւելիներին ընծաների և հիւրասիրութեան համար	3,140	10
6	Քրիստոնեաներին նոցա թողած պարտեզների համար	4,511	60
7	Չբաւոր քրիստոնեաների թաթարներին ունեցած պարտքերի համար	204	45
8	Քրիստոնեաներին նոցա ճանապարհին սատկած եզ- ների համար	65	
9	Բաժանուած է զգեստի, կերակրի և այլ կարիքների համար	1,287	40
10	Պետերբուրգ ուղարկուած լույն և հայ պատգամաւոր- ների ճանապարհածախսի համար	619	
11	Ճանապարհապաշարի համար *)	23,845	67
12	Մինչև Ալեքսանդրոպոլսկ վարձուած սայլերի համար . .	3,876	
13	Ուղղի նահանգապետի ուղարկած սայլերին վարձադրամ	2,780	78
14	Սայլերի հետ եկած պրիստաւներին	10	
15	Զօրքերին նոցանից առած սայլերի համար	8,951	40
16	Սատկած և կորած եղների համար	645	
17	Անասուներին կերի և սայլերի կպրի համար	366	46
18	Տաս հատ սայլի գին և կոտորուած սայլերի կարկա- տանի և նորոգելու համար ծախս	139	30
19	Յուշաց եկեղեցական իրեղէններ փոխադր. համար .	294	
20	Տրուած է կոնֆիդենտին և թարգմանին	132	
21	Թաթարներից գնած եսիքների համար	240	
22	Հին Ղրիմի հայոց մանքի վանահայր վարդապետից գը- նած խոտի և փայտեղէնի համար	270	
23	Վաֆայի Ռափայէլ հային նորա խանի համար շինած կառքի փողը	60	
24	Իգնատիոս Յոյնին Ընկիւղէցի Սպեւոլից նորա ստա- նիկի փողը	40	
25	Դօնի դազակներին նոցա ձիերը պահելու համար **) .	58	58
26	Դաղթականութեան պատճառով եղած գիւանական ծախսերի համար	124	70
27	Դաղթականութեան համար զոտազան կողմեր ուղար- կուած սուրահաւաններին	2,468	56
28	Ղրիմի կապալաւու խոխով վաճառականին քրիստո- նեաների տարած ապրանքի մաքսագին	4,000	
29	Ջանազան մանր ծախքեր	252	
30	Վազի-գիրէյ Սուլթանին նորան մի Յոյնից հասանե- լիք պարտքը	120	
		75,029	92

*) Պաշարեղէն լուծեցողները փոխարէնը փող են ստացել:

**) Բախլիսարայում քրիստոնեաների դուռն գալու պատճառով կանգ-

Հայադաւանները Նոր-Նախիջևան քաղաքը և Նորա գիւղերը հիմնարկելուց յետոյ, մշտապէս բնակութիւն են հաստատում Ռուսաստանում, իսկ կաթողիկէները 12 տարի Վատարինասլաւում մնալուց և աչդտեղ Ս. Լուսաւորիչ անունով մի փայտաշէն եկեղեցի կառուցանելուց (1781—1782) յետոյ, Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ իրաւունք են ստանում վերադառնալու Ղրիմ և վերաբնակելու Վարասու-Քազարում, որտեղից տիրապէս դուրս էին եկել Նոքա: Աիշդ է, հայադաւանները ևս յուսախաբուելով և չհաւանելով իւրեանց Նոր բնակութեան տեղերին, հակումն են ցոյց տալիս հետեւելու կաթողիկէների օրինակին և մինչև իսկ մի երկու ընտանիք փախչում են Վատարինասլաւ և կաթողիկէների հետ միասին վերադառնում են իւրեանց նախկին բնակութեան տեղերը, բաց չեն չափողում. Նոքա ստիպուած են լինում իշխանութեան հանած խիստ արգելքների դէմ գլուխ խոնարհեցնել, և հետզհետէ ընտելանում են իւրեանց Նոր հայրենիքին:

Ժողովրդի յուսախաբուելը և իւր Նոր բնակութեան տեղերին չհաւանելը հետեւանք էր մի կողմից Նոցա տրուած տեղի անբերրիութեան և կլիմայական խստութեան, համեմատելով Նորան Ղրիմի հետ, միւս կողմից էլ այն միջոցների, որ գործ էին դրել մարմնաւոր և հոգեւոր իշխանութիւնները Նոցա գաղթեցնելու համար: Հետարքերական է այս դէպքում բուն ժողովրդի կարծիքն իւր գաղթականութեան մասին, որ մենք պտնում ենք մի ձեռագիր հաւաքածուի մէջ, որ գրուած է գաղթականութեան մասնակցող Քէֆէցի Տէր Մարտիրոս Դպիր Աւետիքով քահանայի ձեռքով 1794—1799 թուականներին Նոր-Նախիջևանի Նիսուրիթայ գիւղում: Թվին ռմիէ ամսեանն յուլիսի, ասում է Տէր-Մարտիրոսը, խօսելով գաղթականութեան մասին, մէկէն ըսկըսվեցավ Ղրիմի եղեալ հաչք և հոռոմք գրնայ 'ի ըռուստաց երկիրն վասն մեր ծովացեալ մեղացն բարկացեալ էր Աստուած 'ի վերայ մեր խաբէութեամբ հանեցին քաղաքներէս տուններըս մլքերըս պաղպաղաններըս բոլորը ձբէցինք մեր կամավրն որդոք զըստերօք լիբելօք և բարեկամօք խաղալ խըղալով մէկ տարի ըռուստաց գիւղ քաղաք մաշեցանք այս բանէս Վատարինէ թագուհին չէր խապար, իբեն մեծամեծքըն ասել են թէ Ղրիմի մլջի եղեալ թուրքն բազում նեղութիւն կուսան տիւ գիշեր. թագաւոր ապրած կէնաս քեզմէն ողորմութիւն կուխնդրեն կուհայցեն թէ ըզմեզ այս հողէս վերցնես 'ի հող բերես մենք քեզ ծառայեմք որդոց որդիս, որովհետեւ զիս սիրով խընդիւր են հրաման է թող հայոց խընդիւրքն թող հայոց հայցուացքն կատարվի, շատ բան ըլլան ետքը և կինք ըռաստովի հողըն. Թէնի (Դօնի մի ճիւղին Զալթրցիները մինչև ցայսօր ևս

«Թեն» են ասում) ,բընարն ,բաղաքի տեղ չաբէցին տըվին մէկ մէկ հատ միրքի (?) դո ն պարգեւք արաւ թագուհին. 5-ական ըռուպլինոց որն բաղէ որն ,բէրբինէ. ոմանք ուժ ունեցողը իւր բողովըն շինեց մինչև բճ. ըռուպլին բռ. գռ. դռ. ըռուպլի շինեցին. ,բաղաքին անունը դրին 'ի Նորըն Նախիջևան, առաջնորդ եղև մեզի Յովսէփ արքեպիսկոպոսն որոյ Տէր Աստուած տացէ երկար կեանք. Ամէն»:

Ժողովրդի նոյն չուսախաբութեան և գաղթականութեան նոյն տխուր հանգամանքների ազդեցութեան ներքոյ է, գուցէ, գրել Տէր-Մարտիրոսը և այն գովասանքը Կաֆա ,բաղաքի մասին, որ մենք գտնում ենք նոյն ձեռագիր հաւաքածուի բաղմաբովանդակ չողուած-ների շարքում և որի մէջ Քէֆէն ներկայանում է մեզ ինչպէս մի ամեն բանով բարեշէն և զեղեցիկ բնակութեան տեղ, հակառակ գաղթականների նոր բնակութեան տեղին, որ այն ժամանակ բոլորովին անշէն և ամալի էր:

Աստուած թող շէն պահէ Կաֆայ,
Բոլոր պարիսպն, որ 'ի նմա կայ.
Քերահայակ անուն նորա,
Աստուած թող շէն պահէ Կաֆայ.
Դռներն ամուր, ինչ 'ի նմա,
Եկեղեցիքն գերակայ,
Զանգակներուն ձայնն կուգայ,
Է իւր վանքերն շրջակայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Էպիսկոպոս մեծ և արքայ,
Ընտրեա մաքուր սուրբ ,բահանայ,
Թագ պարծանաց յերկրի վերայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Ժամատեղաց նման չիկայ,
Իւր ,բահանայքն փիլիսոփայ,
Լուսոյ մաքուր շատ աբեղայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Խոճանին զեկան կուտայ
Ծառայ զնեն և ազատեն զնա.
Կարգեն զնա, առնեն տղայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Հալոց տուն է այժմ Կաֆայ,
Ձայնն ընդհանուր յերկիր կերթայ,
Ղրիմն 'ի հետ իւր մերձակայ.

Աստուած թող շէն պահէ Կաֆայ,
 Ճոխայ ամեն մարդն և խնդայ,
 Մանուկ և՛ մեծ և՛ երեխայ,
 Յերեսնուն լոյս ցայթեալ ցոլայ.
 Աստուած թող շէն պահէ Կաֆայ,
 Նաւն ի ծովին շատ բարեօք զայ,
 Զուրջ վաներօքն ուրախանայ.
 Որդիք մարդկան 'ի յուխտ կերթան.
 Աստուած թող շէն պահէ Կաֆան,
 Չար թշնամին թող վերանայ,
 Պատիւ հայոցս մեծանայ.
 Քաղջնին իւր քամով շուրջ զայ.
 Աստուած թող շէն պահէ Կաֆայ,
 Ռամիկ մարդիկ իշխանք որ կայ,
 Սարկաւաղեր և քահանայ
 Վարդապետին հնազանդ կենայ.
 Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
 Տիկին կանայք տարկեշտք նոքա,
 Բամեալ մարդկան պարծանք նոքա,
 Յնծայ ամեն և ուրախանայ,
 Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
 Հիւանդ հոգով ես ձեզ ծառայ.
 Փառք Աստուծոյ յերակ աստ,
 Քեզ Մարտիրոս Եստուած զթայ,
 Աստուած թող շէն պահէ Կաֆայ:

ՆՈՐ ՆԱԽԻՔԵՒԱՆԻ ԵԿԵՂԵՑՒՆԵՐԸ

Նախիջևանն ունի եօթն եկեղեցիւ Դոցանից վեցը ծխական են, իսկ մէկը հանգստարանի, որ թէև իւր առանձին ծուխը չունի, բայց քաղաքին շատ մօտ լինելով, համարեալ թէ ծխականի հաշուի է, որովհետև ունի իւր միաբանութիւնը և միւս եկեղեցիների պէս կանոնաւոր ամենօրեայ ժամասացութիւն ու պաշտօնակատարութիւն: Դորա ծուխը քաղաքի ամբողջ հայ հասարակութիւնն է, երէցփոխն էլ ընտրուում է բոլոր ծխերից:

Ի սկզբանէ, երբ դեռ հանգստարանի եկեղեցին չի եղել, ծրագրուած է եղել քաղաքում եօթն եկեղեցի շինելու Ղրիմի եկեղեցիների անունով, և հէնց այդ նպատակով էլ քաղաքիս հրապարակներից մէկն էլ նշանակուած է եղել այդ եօթներորդ եկեղեցու հա-